ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200: **գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ՇԱԲԱԹ, 28 ՀՈՒԼԻՍԻ 2018Թ.
№ 19 (477)

Բայց ուղին մեր
եղել է մի՛շտ մթին...
Եղիշե Չարենց

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Սյունյաց աշխարհի մեծանուն զավակ Արամ Մանուկյանի արձանը՝ Երեւանի կենտրոնում

Երեւանի կենտրոնում հուլիսի 17-ին տեղի է ունեցել Առաջին Հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի արձանի բացումը:

Բացման արարողությանը ներկա են գտնվել վարչապետ Նիկոլ Փաշինյանը, նախագահ Արմեն Սարգսյանը, Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը, Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանը եւ այլ հյուրեր:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կարծիքով՝ Արամ Մանուկյանը լիարժեք է կատարել իր առաքելությունը՝ գտել հաղթանակ պարտությունների մեջ, եւ այդ առաքելությունը սերմանել այս հողի մեջ:

«Թերեւս սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ ի դեմս Արամ Մանուկյանի, գործ ունենք մեր նորագույն պատմության մեծագույն առաքյալի հետ: Նա ծնվեց իրականացնելու մի մեծ առաքելություն եւ իրագործեց այն: Դա իսկապես մեծագույն առաքելություն է՝ գտնել հաղթանակ պարտությունների տեղատարափի ներքո, գտնել հույս հուսահատության հեղեղի մեջ, գտնել ուժ, երբ թվում է՝ թեւերդ թուլացած են եւ ծնկներդ ծալված են: Արամ Մանուկյանը լիարժեք կատարեց իր առաքելությունը, նա երբեք չապրեց իր, իր ընտանիքի կամ հարազատների համար, նա ապրեց իր ժողովրդի համար, պայքարեց ու հաղթեց իր ժողովրդի համար: Նա մահացավ իր գաղթած, կոտրված անտուն ժողովրդից իրեն փոխանցված հիվանդության

էջ 2

Սյունյաց թեմը, հիմնված Սուրբ Գրիգորի կողմից, չի կարող անտարբեր լինել այն ամենի հանդեպ, ինչ կատարվում է Հայոց նվիրապետի շուրջ

Քրիստոնյա Հայաստանում Սյունիքն առանձնահատուկ տեղ է ունեցել եւ ունի:

Նորություն ասած չենք լինի, եթե հիշեցնենք, որ քրիստոնեությունը Հայաստան է մուտք գործել առաքյալների ժամանակներում՝ կապված Թադեոս եւ հատկապես Բարդուղիմեոս առաքյալների հետ, ովքեր սուրբ Ավետարանի ճշմարիտ ուսմունքի քարոզումը սկսեցին Սյունիքից:

Ահա Ստեփանոս պատմիչի վկայությունը. **«...Հայերից նախ հավատացյալ դարձան սյունեցիները, որոնք սուրբ Ավետարանին հնազանդվեցին Բարդուղիմեոս սուրբ առաքյալի միջոցով... Բարդուղիմեոսը Պարսկաստանից վերադառնալիս իր աշակերտների հետ գալիս է Ատրպատականով եւ անցնելով Երասխ գետը՝ մտնում է Սիսականի սահմանները, սկսում է քարոզել Որդվատ գյուղում, Արեւիք գավառում, Բաղքում եւ Գողթնում: Սրանք, ընդունելով Ավետարանի քարոզությունը, լուսավորվեցին ավազանի մկրտությամբ...» (Սյունիքի պատմություն, Երեւան, 1986, էջ 76):**

Այնուհետեւ՝ Սյունյաց մեծ իշխանը Թորգոմա տան ընտիր իշխանների, կուսակալների, կողմնակալների մեջ էր, որոնց հավաքեց աստվածապսակ Տրդատ թագավորը եւ ուղարկեց Կապուտկացոց կողմերը՝ Կեսարիա քաղաքը, որ հայերեն Մաժաք են կոչել, որպեսզի տանեն Գրիգորին ու Հայոց երկրի քահայանապետ ձեռնադրեն:

Վերադառնալիս Սյունյաց մեծ իշխանն առաջիններից էր, ով իր գնդով Եփրատում լուսավոր մկրտություն ստացավ:

Այնուհետեւ՝ մատենագրական վկայությունները եւ Ագաթանգեղոսի տվյալները հաստատում են, որ Լուսավորչի կողմից է հիմնվել Սյունյաց եպիսկոպոսությունը, որի անդրանիկ առաջնորդը երանելի Գրիգորիսն էր՝ ձեռնադրված Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից:

էջ 5

Մ՞խ, վոդեւիլ, վոդեւիլ...

Հուլիսի 24-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Սիսիանի նստավայրում տեղի է ունեցել դատական երկու նիստ (երկու հայցադիմումով), որտեղ հայցվորի ներկայացուցիչ է եղել Սամվել Ալեքսանյանը:

Դատական նիստը սկսելուց 20-30 րոպե առաջ նիստերի դահլիճ է բերվել տեսանկարահանող սարք: Փորձ է արվել նկարահանումներ սկսել մինչեւ նիստի մեկնարկը:

Նկարահանողը, ըստ դատարանի աշխատակիցների, Լավրենտի ծառաներից էր:

Սամվել Ալեքսանյանը կոչ արեց՝ նկարահանումներ չանել, քանի որ առանց պատշաճ թույլտվության նիստերի դահլիճում նկարահանում անելը հակասում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին:

Լավրենտի ծառայի եւ խմբագրի միջեւ սկիզբ է առել բանավեճ, որը հեռախոսով նկարահանել է դատական երկու հսկիչից մեկը՝ չաղլիկը: Վերջինիս նույնպես կոչ է արվել՝ դադարեցնել նկարահանումը:

Այնուհետեւ դատական հսկիչը դիմել է դատավոր Իգնատ Բեգլարյանին, ով էլ եկել է նիստերի դահլիճ ու կողմնակի անձանց (մինչեւ դատական նիստը սկսելը) դուրս հրավիրել:

Ս. Ալեքսանյանն Ի. Բեգլարյանին տեղեկացրել է, որ հսկիչը հեռախոսով նկարահանել է խոսակցությունը՝ դահլիճում ինչ-որ օպերատորի կողմից տեսանկարահանում կատարելչկատարելու շուրջ:

Ի. Բեգլարյանը պատասխանել է, թե դա հսկիչի պարտականությունների մեջ է մտնում, թեեւ արգելել է հետագա նկարահանումը:

Մի քանի րոպե անց հսկիչն արդեն հայտարարել է, թե ինքն ընդհանրապես նկարահանում չի կատարել, նման բան առհասարակ տեղի չի ունեցել:

Րոպեներ անց սկսած դատական նիստում ինչ-որ անձինք (երեք հոգի) միջնորդություն ներկայացրին նախագահող դատավորին՝ նկարահանելու եւ տեսաձայնագրելու դատական նիստը:

Սակայն դատարանը, հիմք ընդունելով խմբագրի կողմից մատնանշված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 114-ի 3-րդ կետը, արգելեց դատական նիստի նկարահանումն ու տեսաձայնագրումը:

Դատական երկու նիստից հետո Սամվել Ալեքսանյանին է մոտեցել մի աղջիկ՝ ներկայանալով որպես «Զանգեզուր TV»-ի լրագրող, խնդրել հարցազրույց:

Սամվել Ալեքսանյանը պատասխանել է, որ Հայաստանի Հանրապետությունում չկա «Զանգեզուր TV» հեռուստալրատվամիջոց, որ այդ «հեռուստալրատվամիջոցը» Վահե Հակոբյանի եւ էլիզաբեթի ընտանեկանն է ու կարող է տեսանկարահանումներ կատարել, հարցազրույցներ անցկացնել միայն Վահեենց ճաշասենյակում, խոհանոցում, Քաջարանի կոմբինատում, Քաջարանի պրոֆիլակտորիայում...

Իբրեւ լրագրող ներկայացող աղջիկը, այդուհանդերձ, շարունակել է պնդել, թե հարցազրույց է ուզում:

Խմբագիրը ստիպված է եղել մի քանի անգամ կրկնել, որ Հայաստանում «Զանգեզուր TV» հեռուստալրատվամիջոց չկա, որ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի համաձայն 2011թ. անցկացված մրցույթում (Սյունիքի մարզում) հաղթող է

էջ 6

Սյունյաց աշխարհի մեծանուն զավակ Արամ Մանուկյանի արձանը՝ Երեւանի կենտրոնում

էջ 1

արդյունքում եւ ամբողջացրեց իր առաքելությունը»,-ասաց Փաշինյանը:

Վարչապետի կարծիքով՝ Արամ Մանուկյանն այդ առաքելությունն իր գոյությամբ սերմանել է այս հողի մեջ: Վարչապետ Փաշինյանը նկատեց՝ մեծ հավանականությամբ նա քայլել է այն տեղով, որտեղ հիմա կանգնած են բոլորը:

«Մենք ունենք մեր առաքելությունը: Պետական, հանրային այրերի, ՀՀ քաղաքացիների առաքելությունն է՝ լինել արժանի Արամ Մանուկյանին, նրա առաքինությանը եւ ապրել այնպես, որ իրավունք ունենալ ամեն անգամ նրա արձանի դիմացով անցնելիս նայել ուղիղ նրա աչքերի մեջ եւ ասել, որ տերն ենք իր առաքելության, իր գործը կիսատ չէ: Նրա հաղթանակը կենդանի է»,-ասաց վարչապետն ու հավելեց՝ հայ ժողովուրդը հաղթնակած է հավիտյան:

Արամ Մանուկյանի արձանը տեղադրվել է Արամի եւ Նալբանդյան փողոցների հարող տարածքում՝ Երեւանի Մետրոպոլիտենի «Հանրապետության հրապարակ» կայարանի մուտքի մոտ:

Արամ Մանուկյանը եղել է Հայաստանի առաջին հանրապետության պետական, հասարակական գործիչ, ներքին գործերի նախարար, Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության անդամ: Ղեկավարել է Վանի ինքնապաշտպանությունը, եղել է Վանի նահանգապետ, Հայաստանի հանրապետության կառավարության անդամ:

Սիսիանն աջակցություն է հայտնում նորանշանակ մարզպետ Կարեն Համբարձումյանին

Հուլիսի 15-ին Սիսիանի ամենագողտրիկ անկյուններից մեկում՝ Աշոտավանի եւ Հացավանի մերձակայքում գտնվող «ՄՋԱ» հանգստյան գոտում, հավաքվել էր շրջանի գրեթե ողջ պաշտոնեությունը:

Հավաքվել էին մեկ նպատակով՝ շնորհավորել իրենց զավակ Կարեն Համբարձումյանին՝ Սյունիքի մարզպետ նշանակվելու կապակցությամբ, նաեւ իրենց աջակցությունը հայտնելու նրան:

Ներկաները շնորհակալության եւ գոհության խոսքեր հղեցին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանին՝ ստեղծված իրավիճակում Սյունիքի մարզպետի պաշտոնում ողջամիտ նշանակում կատարելու համար:

Ելույթ ունեցողները պատրաստակամություն հայտնեցին սատարել Սյունիքի նորանշակ մարզպետին՝ ազգանպաստ եւ սյունիքանպաստ գործերում:

Համազգային զարթոնք ապրած Հայաստանում, անշուշտ, նաեւ բազում անորոշություններ եւ տարակույսներ կան ե՛ւ քաղաքական ու տնտեսական, ե՛ւ սոցիալական ու հոգեւոր-մշակութային ոլորտներում:

Սակայն, այդ ամենով հանդերձ, կա խնդիրների մի խումբ, որի վերաբերյալ գրեթե միակամ են Սյունիքում՝ ամրապնդել պետական կարգը երկրամասում, վերականգնել Սյունիքի ոտնահարված արժանապատվությունը, ռացիոնալ եւ նպատակային օգտագործել երկրամասի տնտեսական, բնական ու մարդկային ներուժը, միասնությունն ու համերաշխությունը դարձնել մեր ընթացքի գլխավոր առաջնահերթությունը, վերականգնել մարդկանց ոտնահարված իրավունքները, ճանապարհ բացել պրոֆեսիոնալների համար, մարզպետարանը մաքրել չարափառությամբ հիվանդներից եւ դուրս բերել լեթարգիական քնից:

Կարեն Համբարձումյանն իր գիտելիքներով, մարդկային ու քաղաքացիական նկարագրով, կազմակերպչական ունակություններով ի վիճակի է հիմնարար քայլեր անելու վերոնշյալ խնդիրների լուծման ուղղությամբ, ինչի մասին բարձրաձայնեցին հանդիպման մասնակիցները, ինչին սպասում է սյունիքյան հանրությունը:

«Սյունյաց երկիր»

Նարեկ Ղահրամանյանը՝ Կապանի համայնքապետի պաշտոնակատար



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի 2018թ. հուլիսի 16-ի որոշմամբ Նարեկ Ղահրամանյանը նշանակվել է Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավարի պաշտոնակատար:

Ն. Ղահրամյանը ծնվել է 1991թ. ապրիլի 16-ին Կապան քաղաքում: Ավարտելով Կապանի թիվ 7 միջնակարգ դպրոցը՝ 2008թ. ընդունվել է ԵՊՀ աշխարհագրության եւ երկրաբանության ֆակուլտետ ու ավարտել՝ երկրաֆիզիկոսի որակավորմամբ, բակալավրի աստիճանով: 2012-14թթ. ծառայել է ՀՀ ազգային բանակում:

Աշխատել է «Սուրնալուսշին» ՍՊԸ-ում՝ տնտեսվար, «Կովսականի բարիքներ»-ում՝ մարկշեյդեր, «Վայբլ» ՍՊԸ-ում:

2015 թվականից ՔՊ կուսակցության հիմնադիր անդամ է:

Ամուսնացած չէ:

Դատարանն անվավեր է ճանաչել մարզպետի կարգադրությունը՝ Սմբատ Օրբելյանին «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի պարտականությունից ազատելու մասին

Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյանի 2017թ. հունվարի 17-ի կարգադրությամբ աշխատանքից ազատվել էր «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Սմբատ Օրբելյանը:

Վերջինս դիմել էր դատարան՝ անվավեր ճանաչելու Վահե Հակոբյանի կարգադրությունը, իրեն վերականգնելու «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի պաշտոնում, հօգուտ հայցվորի «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից եւ ՀՀ կառավարությունից գանձելու հայցվորի միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար:

2017թ. հուլիսի 27-ից Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող այդ հայցի քննությունը, ի վերջո, հասել է ավարտական հանգրվան:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը (նախագահող դատավոր՝ Ժաննա Ասատրյան) ս.թ. հուլիսի 12-ին հրապարակել է վճիռ տվյալ գործի վերաբերյալ:

Ըստ վճռի՝ Վահե Հակոբյանի 2017թ.հունվարի 17-ի թիվ 5-Ա կարգադրությունը՝ Սմբատ Օրբելյանին «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի պարտականությունից ազատելու մասին, ճանաչվել է անվավեր:

Հօգուտ Սմբատ Օրբելյանի կբռնագանձվի վերջինիս միջին աշխատավարձի չափով հարկադիր պարապուրդի գումարը՝ 17.01.2017 թվականից մինչեւ պայմանագրով որոշված ժամկետի ավարտը՝ 12.11.2017 թվականը ներառյալ:

Միաժամանակ մերժվել է Սմբատ Օրբելյանի պահանջը՝ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի պաշտոնում վերականգնվելու մասին՝ նկատի ունենալով, որ 2017թ. նոյեմբերի 12-ին լրացել է Սյունիքի մարզպետի եւ Սմբատ Օրբելյանի միջեւ 2012թ. նոյեմբերի 12-ին կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը:

Հ.Գ

Մենք շնորհավորում ենք Սմբատ Օրբելյանին՝ դժվարին եւ անհավասար այդ ճակատամարտում հաղթելու առթիվ եւ հույս հայտնում, որ նա կվերականգնվի նաեւ իր աշխատանքում, ինչին սպասում է արժանապատիվ Կապանը:

Միաժամանակ զարմանք ենք հայտնում, որ կամայական կարգադրություն ստորագրած եւ Հայաստանի Հանրապետության օրենքները քմահաճորեն խախտած մարզպետը պատասխանատվության չի ենթարկվել այդ արարքի համար. չմոռանանք, որ նրա անօրեն կարգադրության հետեւանքով էր հանրապետության ճանաչված բժիշկը մեկուկես տարի հայտնվել հոգեկան եւ բարոյական ապրումների մեջ:



«Սյունյաց երկիր»

Հեպադարձ հայացք վարչապետ Նիկոլ Փաշինյանի սյունիքյան այցին

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցը Սյունիքի մարզ, որ տեղի ունեցավ հուլիսի 5-ին, շարունակում է մնալ հանրության ուշադրության կենտրոնում: Քննարկվող հարցերից մեկն էլ դպրոցականների ամառային հանգստին առնչվող հարցն է, որ քաջարանցի մանկավարժն ուղղեց ՀՀ վարչապետին:

Ստորեւ՝ ե՛ւ հարցը, ե՛ւ պատասխանը (առանց մեկնաբանության)

-Պարոն վարչապետ, Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցի կոլեկտիվն այսօր ողջունում է Ձեզ եւ Ձեր անձնակազմին, ցանկանում է աշխատանքային մեծ հաջողություններ: Որպես մանկավարժ, ուզում եմ խոսել մի հարցի շուրջ: Մանկավարժի համար շատ կարեւոր է սեպտեմբերին ընդունել առողջ եւ ամառային հանգիստն անցկացրած աշակերտ: Մեր քաղաքից ներքեւ՝ գեղատեսիլ բնության գրկում, ունեցել ենք ճամբարներ, որոնք ժամանակին հյուրընկալել են հազարավոր երեխաների, ինչն ամառային սեզոնում նաեւ աշխատատեղ էր մարդկանց համար: Մեր ցանկությունն է, որ Ձեր միջամտությամբ կրկին գործեն այդ ճամբարները:

-Նիկոլ Փաշինյան. «Շատ բարի, մենք կծանոթանանք խնդրին, իսկ ընդհանրապես, եթե այս պահից սկսած տեսականորեն զբաղվենք այդ խնդրի լուծմամբ, ապա տեւական ժամանակ կպահանջվի: Երբեմն ամառային հանգիստ ասելով մանկապատանեկան ճամբար ենք պատկերացնում: Իհարկե, կուսումնասիրենք, կպարզենք, թե ինչ հնարավորություններ կան: Բայց այստեղ՝ Սյունիքի մարզում, դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման տարբեր ձեւեր կան: Կարելի է բնագիտական արշավներ կազմակերպել դեպի մոտակա անտառները, սարերը, կարելի է բակային ճամբարներ կազմակերպել ի վերջո, որտեղ երեխաները մշակութային կյանքով ապրեն եւ մարզական փոքրիկ միջոցառումներ կազմակերպվեն, այսինքն՝ բաներ կան, որոնց միշտ սպասում ենք: Այ, ճամբարը կլինի, էդ 500 միլիոնի ծախսը կլինի, ուրեմն՝ մեր երեխաները կհանգստանան, չի լինի, ուրեմն մենք կնստենք ու սպասենք, մինչեւ կառավարությունը 500 միլիոնը կգտնի, էդ շինարարությունը կավարտվի, ամեն ինչ իր տեղը կընկնի, նոր մեր երեխաների հանգիստը կկազմակերպվի: Պետք է ավելի նախաձեռնող լինել: Ոչ մի բան չի խանգարում, որ երեխաները շատ փոքր ֆինանսական միջոցներով շատ հիշարժան արձակուրդ անցկացնեն՝ արշավներ կազմակերպեն, գնան դաշտերում, անտառներում վրաններ խփեն, մեկ-երկու օր, մի շաբաթ մնան եւ այլն, եւ այլն:

Ձեր ասածն ընդունեցինք ի գիտություն, կուսումնասիրենք՝ ինչ խնդիր կա, լուծման ինչ հնարավորություններ կան: Բայց ընդհանուր առմամբ ուզում եմ ասել, որ պետք է նախաձեռնող լինել ամեն ինչում: Մեր փոփոխության ամենակարեւոր իմաստն այն է, որ մեր երկրում մինչեւ հիմա ինչ էր տեղի ունենում, հիմա ինչ: Միջին վիճակագրական հայաստանցին ասում էր՝ ա, դե, ինձնից ինչ է կախված, ո՞վ է ինձ հաշվի առնում, իմ ձայնն ի՞նչ է որոշում: Երբ ամեն մի քաղաքացի հասկացավ, որ իր դիրքորոշումն է վճռականը, հենց իր ասելիքն է ամենակարեւորը, հենց իր ձայնն է վճռորոշ... Երբ մարդիկ այդպես սկսեցին մտածել, փոխվեց ամեն ինչ, եւ տեղի ունեցավ մի բան, որ բոլորս համարում էինք անհնար: Էլի եմ կրկնում, Ձեր ասածը կընդունենք ի գիտություն, կուսումնասիրենք խնդիրը, կտեսնենք, թե լուծման ինչ միջոցներ կան: Բայց դա չի նշանակում, որ երեխաներն առանց հանգստի պիտի մնան: Փոքր ֆինանսական միջոցներով դա կարելի է անել՝ արշավներ, բակային, թաղային ճամբարներ կազմակերպել եւ այլն, եւ այլն»:

***

Ապրիլ-մայիսյան իրադարձությունների ժամանակ Կապանում եւ Քաջարանում բարձրացված հարցերից մեկն էլ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի խտանյութը տեղափոխող բեռնատարների վարորդների մտահոգությունն էր՝ իրենց զբաղվածությունն արհեստականորեն կրճատելու վերաբերյալ: Բանն այն է, որ տեղացի վարորդները դուրս են մղվում աշխատանքից՝ իրենց տեղը զիջելով Վահե Հակոբյանի եւ մի շարք բարձրաստիճան իշխանավորների սեփականություն հանդիսացող մեքենաների վարորդներին:

Խնդիրը վերստին բարձրաձայնվեց հուլիսի 5-ին Սյունիք այցելած վարչապետի հետ հանդիպման ժամանակ:

Հարցը եւ պատասխանը՝ ստորեւ (առանց մեկնաբանության):

Հարց. 16 տարի աշխատում էի Կապանի ավտոձեռնարկությունում, պղնձի խտանյութ էինք տեղափոխում Կապանից Երեւան, չորս ամիս է՝ անգործ ենք մնացել 9-10 վարորդներս. յուրաքանչյուրս վարկի ու պարտքի տակ ենք, ամեն մեկս երկու- երեք երեխա ունենք, նաեւ բուհում սովորող: Այս ամենի մասին նաեւ գրավոր ներկայացրել ենք, խնդրում ենք Ձեր միջամտությունը՝ մեզ համար անչափ կենսական այդ խնդրի լուծման գործում:

Նիկոլ Փաշինյան. Դուք բարձրաձայնեցիք խնդիրը, մենք ի գիտություն ընդունեցինք, բայց որքանով հասկացանք, դա երկու մասնավոր ընկերության մրցակցություն է: Քանի որ մասնավոր ընկերության հարց է, կհետաքրքրվենք, թե ինչն է պատճառը: Եթե մասնավոր ընկերության համար ապօրինի խոչընդոտներ կան, դրանք կվերացվեն: Եթե չկան ապօրինի խոչընդոտներ, տնտեսվարման խնդիր է, այդ դեպքում չեմ կարծում, թե պետությունը միջամտելու որեւէ բան կունենա: Ամեն դեպքում լսեցինք Ձեր հարցը եւ արձանագրեցինք:

***

Մեղրի քաղաքի հրապարակում հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ քաղաքի բնակիչների հետ հուլիսի 5-ին հանդիպման ժամանակ համայնքի մսուր- մանկապարտեզի տնօրեն Սյուզան Սարգսյանը ներկայացրեց նախակրթարանի անբարեկարգ վիճակը՝ նաեւ հայտնելով, որ հոկտեմբերին լրանում է կրթօջախի 95-ամյակը:

-Բարի գալուստ արեւի երկիր, մեր քաղաքի մանկապարտեզը 95 տարվա պատմություն ունի: Մասնաշենքը, որտեղ հաճախում է 200-ից ավելի երեխա, գործում է 1987 թվականից: Այն գտնվում է խիստ անբարեկարգ վիճակում, հարցը ներկայացվել է բոլոր ատյաններ՝ հանրապետության կառավարություն, Սյունիքի մարզպետարան, «Հայաստան» համահայկական հիմնադրամ, բարեգործական այլ կազմակերպություններ, սակայն սայլը տեղից չի շարժվել, հարցի որեւէ լուծում չի գտնվել: Նախկին վարչապետ Կարեն Կարապետյանը, երբ Մեղրի այցելեց, խոստացավ, որ մանկապարտեզն իր 95-ամյակը կտոնի փոքրիշատե բարեկարգ շենքում: Բայց միայն վերանորոգման նախագծանախահաշվային աշխատանքներ են կատարվել, ինչի արդյունքում պարզվել է, որ հիմնանորոգումը կարժենա 426 միլիոն դրամ: Շենքը տիպային է, կարող է ընդունել մինչեւ 220 երեխա, բայց քանի որ անբարեկարգ են որոշ խմբասենյակներ, չենք կարողանում ութ խմբից ավելի երեխաներ ունենալ: Մանկապարտեզ հաճախելու դիմումներ կան, որոնք չենք կարողանում բավարարել:

Վարչապետն ասաց, որ վստահ չէ, որ մինչեւ հոկտեմբեր, երբ լրանում է մանկապարտեզի հիմնադրման 95-ամյակը, խնդիրը կլուծվի, բայց քանի որ համայնքի միակ մանկապարտեզն է, խնդրի լուծման տարբերակներ պիտի գտնեն:

***

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ Սյունիք կատարած այցի ժամանակ Կապանում կայացած հանդիպմանը չէր կարող շրջանցվել բնապահպանական թեման: Զոհված ազատամարտիկի դուստր Քրիստինե Պետրոսյանի հարցը նվիրված էր հենց մարզի բնապահպանական ոլորտին:

Մեր մարզում, մասնավորապես Կապանի տարածաշրջանում բնապահպանական խնդիրները հետին պլան են մղված: Ընդերքի հարստությունը վայելում են սեփականատերերը, իսկ կապանցիներին բաժին է հասնում աղտոտված օդը: Ինչպե՞ս պիտի լուծվի Կապանի տարածաշրջանի պոչամբարների հարցը, քանզի մեզանում տարածում ունեն ուռուցքային հիվանդությունները, նաեւ երեխաների շրջանում:

Նիկոլ Փաշինյան. Շնորհակալ եմ հարցի համար: Հայաստանի բոլոր մետաղական հանքերում կառավարությունը, բնապահպանական տեսչությունն իրականացնելու են ստուգումներ: Եթե պարզվի որեւէ մետաղական հանք կամ պոչամբար գործում է բնապահպանական կանոններից դուրս, ապա համապատասխան միջոցներ կձեռնարկվեն, օրենքով սահմանված կարգով դրանց առջեւ պահանջ կդրվի, որպեսզի իրենց ամբողջ գործունեությունը համապատասխանեցնեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը: Ես այս խնդրում որեւէ ձեւով կաշկանդված չեմ: Մենք հայտարարել ենք, որ բնապահպանության ոլորտը 100 տոկոսով պիտի համապատասխանեցվի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը եւ բնապահպանական կանոններին: Կարծում ենք՝ որեւէ մեկը չի կասկածում, որ այդպես էլ լինելու է, առավել եւս՝ ձեր աջակցությամբ:

***

Թեպետ Իրան- Հայաստան գազատարն անցնում է Մեղրիով, բայց մեղրեցին ցայսօր չի օգտվում բնական գազից, մանավանդ հնարավորություն չունի ձմռան ամիսներին իր բնակարանը տաքացնել կապույտ վառելիքով: Միակ սփոփանքը մնում է հեղուկ գազից օգտվելը, բայց այդ հնարավորությունն էլ հեշտությամբ չի տրվում մեղրեցուն: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ Մեղրի այցի շրջանակներում տեղի ունեցած հանդիպման ժամանակ, համայնքի տարեց բնակիչներից մեկը բարձրաձայնեց այդ խնդիրը՝ մասնավորապես նշելով, թե չի՞ լինի մի գազալցակայան էլ Մեղրիում տեղադրել: Նաեւ իր բողոքը հայտնեց հեղուկ գազի գնից:

Խնդրո առարկայի առնչությամբ հանրապետության վարչապետը պատասխանեց. **«Գիտեմ, որ Մեղրիում գազ չկա, բայց եթե սկսենք զբաղվել այդ խնդրի լուծմամբ, պիտի խորանանք դրա պատճառների մեջ: Կուսումնասիրենք եւ կտեսնենք պրոբլեմն ինչում է, որ «հա»-ն էլ հիմնավորված լինի, «չէ»-ն էլ, որ հասկանանք, թե ինչն է պատճառը, որ այդ վիճակն է ստեղծվել: Գնի հարցով էլ կզբաղվենք, թե ինչու է այդպես, վաճառող կազմակերպություններով էլ կզբաղվենք, տեսնենք՝ ինչքան հարկ են վճարել, ինչքան աշխատող ունեն, նրանց գրանցե՞լ են, թե՞ ոչ:**

***

Այս հանրահավաքի մասնակիցներից ամենաավագը ես եմ՝ 84 տարեկան: Ուզում եմ ավագ սերնդի անունից շնորհավորել Ձեզ՝ վարչապետ ընտրվելու առիթով եւ շնորհակալություն հայտնել անարյուն հեղափոխություն իրականացնելու համար: Այսօր էլ եկել եք մեր քաղաքը, հազար բարով եք եկել: Ժողովուրդը միշտ Ձեզ հետ է, պինդ կացեք, միշտ Ձեզ աջակցելու ենք: Ձեր դիրքերը չզիջեք: Ուզում եմ միաժամանակ մի քանի հարց ուղղել Ձեզ,- ասաց Վոլոդյա Աբրահամյանը:

Հարց առաջին. մեր երկրի ընդերքում Մենդելեեւի պարբերական աղյուսակի բոլոր էլեմենտները կան. եթե աշխարհի մոլիբդենի պաշարների ութ տոկոսը քոնը լինի, պղնձի 12 տոկոսը քոնը լինի, 36 ոսկու հանքեր ունենաս, որից 5-ը հիմա շահագործում են, այդ երկիրն աղքա՞տ կլինի: Ուզում եմ հասկանալ, ինչո՞ւ է մեր երկիրն աղքատ:

Երկրորդ՝ բնիկ քաջարանցի եմ, եղել եմ «Քաջարանշին» տրեստի կառավարիչ, մի շինարարական կազմակերպության, որ 22 փոխանցիկ դրոշ է բերել Հայաստան (միութենական), առաջին կարգի մրցանակներ, երկու անգամ Քաջարանը կառուցել ենք, մի անգամ Հայրենական պատերազմից հետո, մի անգամ էլ 1968թ. երկրաշարժից հետո, իսկ հիմա նույնիսկ Քաջարան գյուղի ճանապարհը չեն նորոգում, որ մարդիկ կարգին երթեւեկեն:

Ուզում եմ իմանալ, ինչո՞ւ կոմբինատում բոլոր քաջարանցիներին պաշտոնից հանել եւ դրսից են մարդիկ բերել, ովքեր 30-40 անգամ ավելի աշխատավարձ են ստանում, քան տեղացիները: Նախկին Խորհրդային Միության գունավոր մետալուրգիայի նախարարը՝ Լոմակոն 300 ռուբլի աշխատավարձ էր ստանում, իսկ Քաջարանի կոմբինատի բաց հանքի էքսկավատորավար Արտաշես Պետրոսյանը՝ 600 ռուբլի: Իսկ հիմա Քաջարանի կոմբինատի տնօրենը ստանում է 40 միլիոն դրամ, իսկ էքսկավատորավարը՝ 400 հազար դրամ, ո՞րն է պատճառը: Ինչո՞ւ տեղացիներին հանել են, դրսից մարդիկ բերել, ինչո՞ւ Կապանի կոմբինատում դրսից եկած սեւամորթը մի քանի անգամ ավելի աշխատավարձ է ստանում, քան տեղացի մասնագետները: Մեր մասնագետներն ո՞ւմից են պակաս:

Այժմ ոչինչ չի արվում: Ահա նայեք, Կապանի մշակույթի կենտրոնը ցելոֆանով է պատված, նախկին վարչապետին էլ եմ այս հարցը տվել, խոստացավ եւ ոչինչ չարեց:

Այո, բոլոր հանցագործները պիտի նստեն: Բայց ժողովրդին էլ պայմաններ տվեք: Ինչո՞ւ սեւամորթը գալիս է Կապանի կոմբինատում երկու- երեք միլիոն աշխատավարձ ստանում, իսկ մեր տեղացի հորատողը՝ 300 հազար դրամ:

Խնդրում եմ՝ այս հարցերին ուշադրություն դարձրեք:

«Սյունյաց երկիր»

Մեր Եղիազարյանը 50 տարեկան է

1990-ականների սկզբից Սյունիքի հասարակական- քաղաքական անդաստանում ասպարեզ ելան նոր դեմքեր՝ իրենց հետ բերելով նոր մտածելակերպ ու գործելակերպ, նոր պատկերացումներ մեր պետական ընթացքի, նաեւ մեր փոքր հայրենիքի հետագա հզորացման վերաբերյալ:

Համազգային զարթոնքի օրերի գործիչներից ոչ բոլորը, սակայն, մինչեւ վերջ գնացին իրենց ու մեր ընտրած ճանապարհով:

Շատերն էլ, բարեբախտաբար, մնացին իրենց երազած Հայաստանի, իրենց երազած Սյունիքի մասին պատկերացումների տիրույթում ու ձգտեցին սեփական ջանքով նպաստել ազգային երազանքների իրականացմանը:

Նրանցից մեկը, անշուշտ, Սյունյաց աշխարհի Մեր Եղիազարյան զավակն է, ով հուլիսի 24-ին դարձավ հիսուն տարեկան:

Ծնվել է Սիսիանի տարածաշրջանի Լծեն գյուղում:

Շամբի դպրոցն ավարտելուց հետո մասնագիտական կրթություն է ստացել Կապանի շինարարական տեխնիկումում, ապա բարձրագույնն ավարտել Ռուսաստանի Դաշնության Աստրախան քաղաքում:

Ծառայել է խորհրդային բանակում՝ Խաղաղօվկիանոսյան ռազմածովային նավատորմում:

Հասարակական- քաղաքական՝ ի սկզբանե ակտիվ գործունեությունը սկսել է Սիսիանում, շարունակել Սյունիքի մարզում, ապա՝ հանրապետության ամբողջ տարածքում:

20-րդ դարավերջի եւ 21-րդ դարասկզբի՝ մեզ բաժին հասած գերխիտ ժամանակաշրջանում, անկախության ճամփա ելած Հայաստանում, նա, որքանով ճանաչում ենք, չէր կարող ստույգ հավատամք, ապրելու եւ գործելու չափված- նժարված բանաձեւ չունենալ:

Եվ անդամագրվեց Պարույր Հայրիկյանի՝ հայոց կորսված պետականության վերականգնման բացառիկ երախտավորներից մեկի, գլխավորած քաղաքական ուժին՝ Ազգային Ինքնորոշում Միավորմանը:

Հիմա, իհարկե, ոչ մեկիս լեզուն չի պտտվում՝ մեծարանքի խոսքով պսակավորելու քաղաքական այդ ուժին եւ նրա առաջնորդին, մինչդեռ իրականությունն այն է, որ անկախ պետականության գաղափարը՝ անթեղված յուրաքանչյուր հայի ներաշխարհում, խորհրդային էպոխայում ծնված ու ապրած սերնդակիցներիս մեջ արթնացրեց հատկապես այդ ուժը:

Հենց այդ կուսակցության ծրագիրն էլ առավել սրտամոտ եղավ Մեր Եղիազարյանին: Այդ կուսակցության գաղափարական հիմնադրույթները, ըստ նրա, ավելի կանխատեսելի էին դարձնում մեր անցնելիք ճանապարհը, նորանկախ Հայաստանի հզորացման հույս ներշնչում:

Բայց այդ ամենին զուգահեռ, այդ ամենից առաջ նա իր տեղն էր գտել մեկ այլ «փարախում». դա հայրենի երկրամասի՝ Սյունիքի նվիրյալ զավակների առաջապահ գունդն էր, որի զինվորն է մինչեւ հիմա ու, համոզված ենք, որի շարքերում մնալու է մինչեւ կյանքի վերջ:

Եվ քաղաքական, մարդկային, բարոյական այդ կողմնորոշումներում, այդ տեղում, այդ ճանապարհին երբեք չաղարտվեց, չաղավաղվեց, կիսատ չմնաց, որովհետեւ հայրենապաշտության արեւոտ այդ հարթավայրում ի սկզբանե ոտք էր դրել որդու եւ տիրոջ, տիրոջ ու մշակի իրավունքով եւ առաքելությամբ:

Վերջին մեկ- երկու տարում մեր երկրամասը ենթարկվեց դաժան փորձությունների:

Կյանքի եւ հրապարակի տերերը փախան, ծակուծուկ մտան, երեկվա կուռքերը տապալվեցին:

Հատուկենտ մարդիկ մնացին ասպարեզում, քչերը տեր կանգնեցին Սյունիքի եւ սյունեցու արժանապատվությանը. նրանցից մեկն ինքն էր՝ Մեր Եղիազարյանը:

Նա չընդունեց օրվա իշխանավորի եւ երկրամասն ավարառության ենթարկողների պարտադրած պարտությունը, որն ընդունել էին սյունեցի պատգամավորները, սյունեցի համայնքապետերը, մեծ ու փոքր իշխանավորները, կուսակցություն- թայֆաների տեղական լիդերները, «լավ տղերքը», «գործարարները»…

Ու դրանով երիցս հաստատեց, որ լույսն անպայման բացվելու է:

Ընդամենը նոր անուններով նորացվող մեր օրերում Մերը ժամանակ առ ժամանակ հառնում է նոր գործերով ու նախաձեռնություններով:

Մայրաքաղաքում է՝ լրագրողական ընտանիքում, հեղինակավոր «haynews.am» կայքի հիմնադիրն ու տնօրենն է:

Լրատվական դաշտում էլ նրա տեղը հաստատուն է, նրա քայլերը՝ վստահ:

Այսօրվա՝ այնքան էլ ոչ խաղաղ մեր հանգրվանում տեսնում ենք՝ ծավալված ու շարունակվող իրականությունն իրեն այնքան էլ չի բավարարում: Չէ, ընդհմադիր չէ համաժողովրդական վստահությամբ օժտված իշխանությանը: Պարզապես իր վերածնվող հայրենիքի ու հայրենիքի վերածնման արժանապատիվ շարքայինն է ու մարտիկը եւ ուզում է ավելի լավ տեսնել մեր երկիրը, ավելի հաստատուն՝ մեր ընթացքը:

Զարմանալի մարդ է. նրա ներսի թագավորությունն անծայրածիր է ու այնքան բազմամարդ, բազմաբեւեռ, որ քչերի մոտ կարելի է հանդիպել մարդկային հարաբերությունների նման իրողություն:

Ու այդ թագավորության յուրաքանչյուր բնակչի տեղը գիտի:

Յուրաքանչյուրի հաջողությունից շառագունվում է, անհաջողությունից՝ գունատվում, մտահոգվում, կարեկից լինելու ջանքեր գործադրում:

Մի խոսքով՝ ընկերության մեջ, բարեկամության մեջ նրա քայլը միշտ էլ մեր քայլից առաջ է եղել ու առաջ է, նրա վարքը՝ ընդօրինակման արժանի:

Նա իր ընկերներին սիրտ ու ձեռք է պարգում՝ անկեղծությամբ ու մաքուր եղբայրությամբ:

Ընկերության մեջ յուրօրինակ տեղ ունի Սյունյաց աշխարհի մեկ այլ արժանավոր զավակ՝ Խաչիկ Ասրյանը, ում ազգանպաստ գործին ու նախաձեռնություններին վերջին տասը տարում ձգտել է աջակից լինել իր կարելիությունների չափով:

Մեր Եղիազարյանը բարեհամբավ գերդատանի շառավիղ է՝ օրինակելի օջախով, հայոց ազգային բանակում հպարտորեն ծառայած երկու որդիներով, գերդաստանի լավագույն ավանդույթները պատվախնդրորեն շարունակող տիկին Նորվարդով:

Նրա օջախում կարելի է սիրտ ջերմացնել:

Նրա օջախում կարելի է սյունիքյան ավանդույթներից շատերին հաղորդակից դառնալ:

Առանձնահատուկ վերաբերմունք ունի նախնյաց հիշատակի հանդեպ. ծննդավայրում լինելիս առաջինն այցելում է Ծաղիկ տատի գերեզմանը, ում բոլորից շատ է սիրել, ում խորախորհուրդ պատգամներն այսօր էլ կողմնորոշիչ են նրա համար:

Հայորդու նրա զորավորության հորդաբուխ ակունքը, հոգեւոր սկիզբը, հենման կետը Սյունիքն է՝ մեր սրբասուրբ լեռնաշխարհը:

Ամենադժվարին իրավիճակում անգամ, ինչի մեջ հայտնվել է քանիցս, հոգնություն եւ հուսահատություն չես տեսնի նրա դեմքին:

Ամենադժվարին իրավիճակում անգամ նա անհաղորդ չէ սյունիքյան անցուդարձին, մեր լեռնաշխարհի առօրյային:

Գրեթե ամեն օր տեսնում ենք, թե ինչպես է որդիական սիրով գուրգուրում իր փոքր հայրենիքը՝ Սյունիքը:

Մայրաքաղաքից, ցավոք, չեն երեւում հանրապետության մարզերը, չի երեւում, որ երկրի ներքին կյանքը գավառների ու մայրաքաղաքի է բաժանված՝ ինչպես երեկ, այնպես էլ այսօր: Եվ երեկվա ու այսօրվա իշխանավորների գլուխներում այդպես էլ տեղ չի գտնում լեռնային, սահմանամերձ գյուղերի ճակատագիրը: Բայց տեղաբնակներս, նաեւ մեր հոբելյարը, տեսնում ենք այդ ամենն ու ցավ ապրում:

Ավելի վաղ Համո Սահյանն էր նկատել ու մասրենու մարդկային էությամբ եւ «մտածումներով» եղերերգել՝

«Պտուղդ քաղող չկա,
Մասրենի, սարի մասրենի,
Պատիվդ պահող չկա,
Մասրենի, բարի մասրենի:

Ասում են՝ էլ մարդ չկա,
Որ փնտրի քնքշանքդ փշոտ,
Քեզ գրկի ու տաքանա,
Մասրենի, ժայռի մասրենի»:

Հայոց մեր լեզուն, պարզվում է, ավելի սարսափելի անեծք չի ճանաչում, քան «տունդ քանդվի» անեծքը: Եվ մեր աչքի առաջ՝ անկախ Հայաստանում, սարսափելի այդ անեծքը համառորեն, հետեւողականորեն առարկայանում է հազարամյակների խորքից եկող լեռնային մեր գյուղերում:

Ու ամեն օր…

Դրան զուգահեռ մարզի երեւելիներին լուսանցք մղեցինք, մի մասին էլ երկրամասից քշեցինք, որ միջակների հանդեսը չխաթարվի հանկարծ…

Կկարողանա՞նք տանտիրոջ իրավունքով ու պատվախնդրությամբ յուրաքանչյուրին հետ բերել եւ մասնակից դարձնել մեր երթին, թե՞ կթողնենք ամայացման մեր հանդեսի վկաների, ժամապահների դերում՝ նրանց հոգսը մերը չհամարելով:

Իսկ երկրամասը համակած անհամերաշխության ալիքն ու պառակտվածությունը… Որքա՜ն հետեւողականությամբ է մանրագործվել այդ ամենը, որքա՜ն հաջողությամբ է այդ ամենն օգտագործվել եւ օգտագործվում ընդդեմ Սյունիքի…

Չէ, չենք շեղվել թեմայից. բոլորս էլ հայրենիքավոր ենք մեր փոքր հայրենիքով, յուրաքանչյուրիս ապրած տարիներն ու անցնելիք ճանապարհն էլ առանց հայրենի տան հնարավոր չէ պատկերացնել:

Եվ ուրեմն՝ ինչո՞ւ Սյունիքի զավակներից մեկի տարեդարձի առիթով վերստին չբարձրաձայնենք այդ մասին, մանավանդ որ հոբելյարը եւս այդկերպ է մտածում, մանավանդ որ ինքն էլ անելիք ու ասելիք ունի այս իրավիճակում, թե չէ Սյունիքը ոգու կրակ չի փոխանցի ոչ մեկիս եւ վեմ քար չի լինի հայոց պետականության համար, ինչպես կանխորոշված է ի վերուստ…

Մեր Եղիազարյանի ծննդավայրը Լորաձորի առաջին գյուղն է (ներքեւից)՝ Որոտանի աստվածասկիզբ կիրճի աջափնյա պռնկին՝ դեռեւս Ստեփանոս պատմիչի մատյանում հիշատակված: Եղիա մարգարեի լեռան ստորոտում է, ինչպես եւ մեծ քնարերգուի բնօրրան Լորը: Կիրճի մյուս քարափին Որոտնաբերդն է, Որոտնավանքը, Սուրբ Հովհան Որոտնեցու ծննդավայրը, եւ այդ ամենը՝ Մեծ Իշխանասարի, Եռաբլրի, Արամազդ լեռան ու Գյազբելի հավերժական հայացքի ներքո…

Սիսիան, համայնապատկեր

Բանաստեղծականացված եզերքում, նաեւ հայոց մեծերից շատերի մասին հիշողություններով ու զրույցներով են հարգելի երամիշ Եղիազարյանը եւ տիկին Մարիետան դաստիարակել իրենց ավագ որդուն…

Հիսուն տարին, անկասկած, մարդու մասին ամփոփիչ եւ ամբողջական խոսք ասելու ժամանակը չէ, թեեւ հոբելյարը տարեդարձը դիմավորում է բեռով- բարձով:

Հիսուն տարին խորհիմաստ եւ հետաքրքիր հանգրվան է մարդու կյանքում. տարիների փորձ, իմաստություն, ծրագրեր, երազանքներ, կիսատ մնացած եւ անցնելիք ճանապարհ… Այնպես որ՝ 20-30 տարի ժամանակ ունենք դեռ՝ մինչեւ ստիպված կլինենք ընթերցել սահյանական ասքի հայտնի էջը՝ «Օրը մթնեց»:

Ու այդ ընթացքում նոր գործեր, նոր ու համարձակ նախաձեռնություններ ենք սպասում Մեր Եղիազարյանից, ինչին անպայման ականատես ենք լինելու:

Ուրեմն եւ՝ շնորհավորենք մեր սիրելի հոբելյարին՝ 50-ամյակի կապակցությամբ, ցանկանք նրան քաջառողջություն, ստեղծագործական հաջողություններ, անավարտ ծրագրերի, մտահղացումների, երազանքների իրականացում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Սյունյաց թեմը, հիմնված Սուրբ Գրիգորի կողմից, չի կարող անպարբեր լինել այն ամենի հանդեպ, ինչ կատարվում է Հայոց նվիրապետի շուրջ

էջ 1

Սյունյաց Անդոկ իշխանն էլ (հայոց ուրիշ իշխանների գլուխ անցած) Ներսես Մեծին ուղեկցեց Կեսարիա՝ Եվսեբի հայրապետի մոտ՝ ձեռնադրվելու Ամենայն հայոց կաթողիկոս: Ապա մեծ ժողովով Սյունիքի եպիսկոպոսությունը հռչակվեց Սյունյաց մետրոպոլիտություն, Սյունիքը՝ պատրիարքի նախաթոռ, որ հունարեն լեզվով կոչվում է պրոտոֆրոնտես Մեծ Հայքի:

Եվ այդ կարգավիճակը շարունակվեց դարեր շարունակ:

Իսկ Սուրբ Սահակի եւ Մեսրոպի կողմից՝ Հայոց մեջ նախաթոռ վարդապետությունը, նաեւ գրքերի մեկնության ու թարգմանության իրավունքը միայն Սյունիքի մետրոպոլիտությանը շնորհվեց:

Հետագա դարերում էլ Սյունիքն անգերազանցելի դեր խաղաց ունիթորության, քաղկեդոնության դեմ պայքարում: Չլիներ Սուրբ Հովհան Որոտնեցու եւ Սուրբ Գրիգոր Տաթեւացու եռանդուն գործունեությունը, միգուցե եւ Հայ առաքելական եկեղեցին անդառնալի կորուստներ ունենար պապության նվաճողական ձգտումների օրերում:

Նույն չափ բացառիկ էր Սյունյաց աթոռի դերակատարությունը դեգերումների մեջ հայտնված Հայոց եկեղեցական աթոռն էջմիածնում վերահաստատելու գործում: Սյունյաց եպիսկոպոսությունն էր, տիեզերահռչակ Գրիգոր Տաթեւացու գլխավորությամբ, որ պայքարում էր Վաղարշապատում վերականգնված տեսնելու կաթողիկոսի գահը, ինչն էլ իրականացվեց եռամեծար փիլիսոփայի եւ աստվածաբանի աշակերտների կողմից՝ 1441-ին, որով եւ ավարտվեց Հայոց կաթողիկոսական աթոռի 1000-ամյա աստանդական ու դեգերումներով լեցուն շրջանը:

Ոչ պակաս հիշարժան է Սյունիքի դերը նաեւ 17-րդ դարասկզբին, երբ Մայր աթոռը կանգնած էր լինել-չլինելու ստույգ սպառնալիքի առջեւ: Եվ միայն Մովսես Տաթեւացի (Խոտանանցի) բարեփոխիչ կաթողիկոսի ջանքով չեզոքացվեց Հայ առաքելական եկեղեցու պառակտման վտանգը, աղբակույտերից մաքրվեց եւ վերաշինվեց Մայր աթոռը, վերջ դրվեց աթոռակից կաթողիկոսների արատավոր ավանդույթին:

Չենք խոսում աստվածության գանձարան, Սիսական տան բոլոր վանքերի գլուխ եւ շնորհաբաշխության աղբյուր Տաթեւի, ինչպես եւ Սյունյաց 49 վանքերի մասին, որոնք հարյուրավոր տարիներ շարունակ արթուն են պահել Քրիստոսի ուսմունքը ոչ միայն մեր լեռնաշխարհում, որոնցից (թեեւ մի մասն ավերված է) շարունակում է հորդալ հավատ եւ հույս մինչեւ այսօր:

Պատմական փաստարկների թվարկումը եւ Հայ առաքելական եկեղեցու պատմության մեջ Սյունիքի դերակատարության ցուցանումը կարող ենք շարունակել, բայց, կարծում ենք, ասվածը բավական է մեր մտահոգությունները հիմնավորելու համար:

Եվ, այդուհանդերձ, ինչո՞ւ մեր ասելիքի համար նախաբան կամ պատվանդան ընտրեցինք պատմական եղելություններից մի քանի դրվագ:

Դրանով, նախեւառաջ, կամեցանք վերստին հիշել ու հիշեցնել պատմական իրողությունը՝ Սյունիքն անգերազանցելի դեր է խաղացել Հայաստան աշխարհում քրիստոնեության տարածման, քրիստոնեական արժեքների սերմանման, Հայ առաքելական եկեղեցու լինելիության ապահովման, մեր դավանանքի անաղարտության պահպանման աստվածահաճո գործերում:

Ասվածով վերահաստատեցինք այսօրվա սերնդակիցներից շատերի անքննելի, անսակարկելի հավատամքն ու վճռականությունը, որ տեր ենք մեր նախնիներից փոխանցված սրբազան ժառանգությանը, որ այդ ամենի հավատարիմ շարունակողն ենք:

Եվ այն, ինչ վերջին շրջանում տեղի է ունենում Հայոց նվիրապետի շուրջ, դատապարտում ենք ամենայն խստությամբ ու անթույլատրելի համարում նմանատիպ գործողությունների հետագա կրկնումը:

Մենք ակնկալում ենք Հայոց պետությունից, երկրի բարձր իշխանությունից, որ խստագույնս կդատապարտեն տեղի ունեցած արգահատելի գործողությունները եւ ոչ մի պարագայում թույլ չեն տա նմանատիպ գործողությունների շարունակում:

Մենք, իհարկե, չենք հերքում իրողությունը, որ Հայ առաքելական եկեղեցու ներքին կյանքում, հոգեւոր բովանդակությանն առնչվող հարցերում կան բազում մտահոգություններ, որոնք ողջամիտ եւ քաղաքակիրթ քննարկման պետք ունեն. «Սյունյաց երկրի» խմբագրակազմն էլ, հարկ եղած դեպքում, հաճույքով կմասնակցի նման քննարկումներին եւ բանավեճերին:

Սյունյաց մեծերից մեկ ուրիշը՝ Նիկողայոս Ադոնցն էր ասում՝ **«Դարեր շարունակ երկրի քաղաքական վիճակի փոփոխությունների հետ փոփոխվել է նաեւ հայ եկեղեցին՝ հարմարվելով նոր պայմաններին» (Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երեւան, 1987, էջ 359):**

Առանց վերապահումի համաձայն ենք մեծ հայագետի հետ՝ ենթադրելով, անշուշտ, որ խոսքը դավանաբանական հարցերի մասին չէ, այլ գործելակերպի:

Մեծն Ադոնցի դիտարկումից բխեցնում ենք՝ աշխարհում, նաեւ մեր երկրում տեղի ունեցող փոփոխություններին համահունչ փոփոխությունները պիտի կատարել Հայ առաքելական եկեղեցում եւս:

Եթե կան հարցեր՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին առնչվող, դրանք նույնպես պետք է հիմնավոր պատասխան ստանան: Բայց այն մեթոդը, այն գործելակերպը, պայքարի այն եղանակը, որ ընտրել են ոմանք, ինչին եւ ականատես եղանք, մեծագույն վիրավորանք է նախեւառաջ մեր պետականությանն ու ինքնիշխանությանը, ապա եւ Հայ առաքելական եկեղեցուն, ինչպես եւ հավատավոր ամեն մի հայի:

Հայ առաքելական եկեղեցին բոլորինս է, յուրաքանչյուրինս է, նաեւ իմ ու ձեր նախնիներինն է, իմ ու ձեր զավակներինն ու թոռներինն է, այսօրվա ու վաղվա Հայաստանինն է, Արցախ աշխարհինն է, նաեւ սփյուռքահայությանը:

Եվ հանրության որեւէ խմբի քայլերը, եթե անգամ փաստարկված լինեն, ինքնիրավչություն են եւ անթույլատրելի: Ավելին, նման քայլերով չենք կարող եկեղեցու առջեւ ծառացած որեւէ խնդիր լուծել:

Մի խոսքով՝ պետք չէ բանը հասցնել այնպիսի վտանգավոր հանգրվան, որ Հայաստանի տարբեր վայրերից հավատավորներն ու Հայ առաքելական եկեղեցու նվիրյալները հասնեն Սուրբ Էջմիածին եւ պաշտպան կանգնեն Հայոց նվիրապետին:

Սամվել Ալեքսանյան

Արդյո՞ք կառավարությունը չգիտի, թե ովքեր էին Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի սեփականատերերը 2004-ին՝ մասնավորեցման ժամանակ, եւ ովքե՞ր են հիմա, ու ինչպե՞ս են փոխվել սեփականատերերը

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի հուլիսի 20-ի ասուլիսին մասնակցել է նաեւ «Սյունյաց երկրի» ներկայացուցիչ Տաթեւիկ Առաքելյանը:

Վարչապետին ուղղված նրա հարցը «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության մասին էր:

Տաթեւիկ Առաքելյանի հարցը եւ Նիկոլ Փաշինյանի պատասխանը՝ ստորեւ

Տ. Ա. -Պարոն վարչապետ, Դուք հուլիսի 5-ին Սյունիքում էիք եւ բազմաթիվ այլ հարցերի ու պատասխանների մեջ մեկը, թերեւս, մնաց անպատասխան, որը սյունեցիներին շատ է հետաքրքրում: Ովքե՞ր էին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի սեփականատերերը 2004 թվականին՝ մասնավորեցման ժամանակ, եւ ովքե՞ր են հիմա, ու արդյո՞ք կառավարությունը կգնա այդ խոշորագույն ընկերության ազգայնացման ճանապարհով:

Ն. Փ. - Այդպիսի հա՞րց է եղել Սյունիքում:

Տ. Ա. -Սյունեցիներին թերեւս ամենաշատը դա է հետաքրքրում:

Ն. Փ. -Բայց իմ հանդիպումների ժամանակ այդպիսի հա՞րց են տվել: Գիտե՞ք, մենք հայտարարել ենք, որ բոլոր մետաղական հանքերում իրականացնելու ենք ստուգումներ: Եկեք, ճիշտ արձանագրենք. ամեն ինչի համար պետք է լինի իրավական հիմնավորում: Բացառված է, որ որեւէ կամայական որոշում որեւէ հարցով կայացնենք: Սա եկեք արձանագրենք: Եթե նույնիսկ հոգու խորքում կարող է լինել ցանկություն, որ այդպիսի կամայական որոշում լիներ, ինչ լավ կլիներ, մենք որեւէ կամայական որոշում չենք կայացնելու: Մեր գործողություններում մեզ սահմանափակողն առաջին հերթին լինելու ենք մենք, որովհետեւ իշխանական ամենաթողությունից խուսափելու ամենաճիշտ ճանապարհը սա է: Հիմա եթե լինեն իրավական հիմքեր, ես ասում եմ, որեւէ խոչընդոտ մենք չունենք ու չենք ունենալու: Սա է հարցի պատասխանը: Ինչ վերաբերում է սեփականատերերին, այո, կան տվյալներ սեփականատերերի մասին, տարբեր լուրեր, օպերատիվ տեղեկություններ, եւ այդ ամեն ինչը ճշտման պրոցեսում է, եւ կճշտվի, ինչպես հարկն է, ըստ անհրաժեշտության:

Տ. Ա. -Այսինքն՝ կառավարությունը դեռ չի՞ տիրապետում՝ ովքեր են սեփականատերերը:

Ն. Փ. –Կառավարությունն ընդհանուր առմամբ, կարծում եմ, տիրապետում է:

Տ. Ա. –Իսկ ընկերության ազգայնացման ճանապարհի հետ կապվա՞ծ…

Ն. Փ. -Ես ասացի, ամեն ինչի համար պիտի լինեն իրավական հիմքեր: Ասացի, որ ստուգելու ենք, ստուգման պրոցեսները պետք է տեղի ունենան: Ցավոք, դրանք, նաեւ ծավալների հետ կապված, շատ արագ չեն կարող լինել: Եթե այդ ընթացքում կպարզվի, որ ինչ-որ բան անելու իրավական հիմք կա, մենք դա կանենք: Եթե պարզվի, որ չկա իրավական հիմք, մենք դա չենք անի:



Մեղրիում եւս խնդրահարույց է հանքերի շահագործումը

Հուլիսի 5-ին Մեղրիում հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ կայացած հանրահավաքի ժամանակ «Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ նախագահ, «Հա՞նք, թե՞ կյանք» նախաձեռնության անդամ Սաթիկ Հարթունյանը բարձրացրեց Լիճքի հանքավայրի շահագործման խնդիրը:

-Մեղրեցիներիս համար շատ կարեւոր է հանքարդյունաբերության հետ կապված խնդիրները, քանի որ Մեղրու տարածաշրջանը մետաղական հանքերի խտությամբ հանրապետությունում առաջիններից է: Հարցը միշտ անհանգստացրել է մեղրեցիներին: Բազմաթիվ անգամ պայքարել ենք, բայց արդյունքի չենք հասել նախորդ իշխանությունների ժամանակ, կարծում եմ՝ իրավիճակ է փոխվել, եւ սկսել ենք նորից պայքարել Լիճքի հանքի շահագործման դեմ. ապրիլի սկզբին բավականին մեծ թափով, ապա մայիսի 16-ից սկսել ենք ստորագրահավաքն այդ հանքի փակման դեմ, 18-ից պիտի սկսեինք ակտիվ գործողությունների շարքը՝ բայց հետեւելով Ձեր կոչին՝ դադարեցրեցինք ակցիաները: Քանի որ այդ ամենը Ձեր ուշադրության կենտրոնում է, հուսով ենք՝ արդար լուծում կստանա: Տասը օրվա ընթացքում մեղրեցիները հավաքեցին 3500 ստորագրություն, որ, կարծում եմ, բավականին շատ է, եթե հաշվի առնենք, որ պոտենցիալ ընտրողների թիվն ընդամենը դրա կրկնակին է: Փաթեթը հանրագրի տեքստով, ստորագրություններով եւ կից նամակով հանձնեցի: Ինչո՞ւ ուշացրինք

էջ 8

Արարատ Մանուչարյան. «Պարտավոր ենք հաղթահարել բոլոր դժվարությունները»

Գնդապետ, «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի ասպետ Արարատ Մանուչարյանն ապրիլի չորսից ղեկավարում է Սյունիքի նորաստեղծ զինկոմիսարիատը: Նախկին շրջանների (Կապան, Գորիս, Սիսիան եւ Մեղրի) զինկոմիսարիատները լուծարվել են: Դրանց տեղերում ստեղծվել են բաժանմունքներ՝ 4 հոգանոց անձնակազմերով: Եղան կրճատումներ, նախկին զինկոմիսարիատների որոշ աշխատակիցներ ցանկություն հայտնեցին աշխատել Սյունիքի զինկոմիսարիատում: Նորանշանակ զինկոմի փոխանցմամբ՝ ուղիներ են փնտրում կրճատվածներին զորամասերում կամ որեւէ հիմնարկ- ձեռնարկությունում աշխատանքի տեղավորելու համար:

Արարատ Մանուչարյանն Արցախյան ազատամարտում մնայուն հետք թողած առաջամարտիկներից է, զինվորականի ուսադիրներ կրեց 1992-ի նոյեմբերի 1-ին, երբ ավագ լեյտենանտի կոչումով զորակոչվեց հայկական բանակ: Երբ կազմավորվեց Կապանի 97-րդ մոտոհրաձգային բրիգադը, առաջին համալրողների շարքում եղել է նաեւ Արարատ Մանուչարյանը: Մասնակցել է Կապանի սահմանամերձ գյուղերի, Կուբաթլիի, Զանգելանի, Ջեբրաիլի, Ֆիզուլիի եւ Հորադիզի մարտական գործողություններին: Կռվի թեժ ժամանակահատվածում՝ Հորադիզի մարտերի ժամանակ, նրան վստահվեց 97-րդ մոտոհրաձգային բրիգադի հինգերորդ դեսանտագրոհային գումարտակի հրամանատարությունը: Գումարտակ, որ մարտնչել է Հորադիզի պաշտպանության գծի ամենապատասխանատու հատվածում:

Տարվա սկզբին 97-րդ մոտոհրաձգային բրիգադի ստեղծման 25-րդ տարեդարձին նվիրված հանդիսության ժամանակ բրիգադի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Միքայել Գրիգորյանը նրա մասին ասել է. **«Արարատ Մանուչարյանի հրամանատարության ներքո գտնվող 5-րդ մոտոհրաձգային գումարտակն ամենադժվարին տեղում էր մարտնչում, հենց այն տեղում, որտեղից հակառակորդն ուզում էր ճեղքել դեպի Ֆիզուլի, բայց չկարողացավ: Մինչեւ հիմա էլ ճեղքում են...»:** Պատերազմի տարիներին նրա մեջ բացահայտվեցին զինվորական հմտություններ, ունակություններ, հայրենիքին ծառայելու պատրաստակամություն եւ այլն: Զինակիցների փոխանցմամբ՝ որպես գումարտակի հրամանատար, կարեւոր հանձնարարություններ էին տալիս՝ համոզված լինելով, որ մարտական գործողությունների փորձը, գիտելիքները, իմացածը կփոխանցի սկսնակ մարտիկներին, եւ մարտական առաջադրանքի կատարումն ապահովված կլինի:

1994-ի զինադադարից հետո զինվորական համազգեստը չկախեց մեխից: Շարունակեց ծառայել հայոց բանակում՝ ստանալով նոր նշանակումներ: 1998-ին ստացավ փոխգնդապետի կոչում՝ նշանակվելով զորամասի շտաբի պետի տեղակալ-օպերատիվ բաժնի պետ: Այնուհետեւ հետագա ծառայության է տեղափոխվել N զորամաս՝ որպես մարտական պատրաստության բաժնի պետ: 2009-ից ծառայությունը շարունակել է ՀՀ պաշտպանության նախարարության օպերատիվ վարչությունում՝ պաշտոններ է վարել, այնուհետեւ՝ բաժանմունքի պետ՝ մինչեւ Սյունիքի զինկոմ նշանակվելը: Նրա նվիրված ծառայությունն աննկատ չի մնացել, արժանացել է մեդալների եւ այլ խրախուսանքների, իսկ հայրենի եզերքի պաշտպանության գործում ունեցած ավանդի համար գնդապետ Արարատ Մանուչարյանն արժանացել է «Կապան» ոսկե հուշամեդալի:

Զինծառայության ժամկետը լրանալու պատճառով կենսաթոշակի պիտի անցներ՝ պաշտպանության նախկին նախարար Վիգեն Սարգսյանի հրամանով նշանակվել է Սյունիքի զինկոմ: Նախարարի ցանկությունն էր, որ գնդապետ Արարատ Մանուչարյանը ստանձնի այդ պաշտոնը: Նախկին չորս վարչական շրջանի զինկոմիսարիատները պիտի միավորվեին, ստեղծվեր նոր կառույց՝ նոր խնդիրներով ու պահանջներով: **«Հարմարը քեզ եմ գտնում աշխատել այդ պաշտոնում»,**- ասել է նախարարը: Բացի այդ՝ նախարարի կողմից զորացրման առթիվ պարգեւատվել է անվանական զենքով՝ «ՊՄ» տեսակի ատրճանակով:

Այժմ արդեն նոր ոլորտում նրա գործունեության պատասխանատու շրջանն է: Հուլիսի 2-ից մարզում մեկնարկել է ամառային զորակոչը: Հուլիսի 20-ին զինկոմին հանդիպեցինք Կապանի Գարեգին Նժդեհի հուշահամալիրում, որտեղից զինակոչիկների երկրորդ խումբը մեկնում էր կենտրոնական հավաքակայան: Հայրենիքի ապագա պաշտպաններին ողջերթի խոսքեր հղեցին Սյունիքի մարզպետ Կարեն Համբարձումյանը, Կապան համայնքի ղեկավարի պաշտոնակատար Նարեկ Ղահրամանյանը, Կապանի վետերանների խորհրդի նախագահ Ռաֆիկ Հարությունյանը եւ Սյունիքի զինկոմը, ով մասնավորապես նորակոչիկներին պատգամեց՝ լինել կարգապահ, անքերի կատարել հրամանատարների առաջադրանքներն ու հրամանները՝ հրամանատարներին լսող զինվորը երբեք ոչ մի խոչնդոտի չի հանդիպի եւ հատկապես հմտորեն տիրապետել ռազմական տեխնիկային ու զենքին. **«Հույսներդ դրեք ձեզ վրա, հաջողությունը ձերը կլինի, եթե սրբորեն հետեւեք զինվորական կանոնադրության պահանջներին, տիրապետեք զենքին, որ իմանաք զենքն ինչ հնարավորություններ ունի, եթե չտիրապետես զենքին, աննպատակ կրակոցներ կարձակես եւ կտեսնես, որ փամփուշտդ վերջացել է, հակառակորդիդ հնարավորություն կտաս առաջ շարժվել: Իսկ ամենակարեւորը Սյունյաց ոգին է, որ ունենք: Այստեղ, մեր պապերը, հայրերը, դարեր ի վեր պահել են մեր հողը, ոչ մի ոսոխ Սյունիքում հաջողություն չի ունեցել, ժամանակավոր ներխուժել են, բայց հաջողությունը նրանց երկար չի ուղեկցել, մեր լեռները միշտ աննկուն են մնացել: Միշտ հիշեք Գարեգին Նժդեհի խոսքերը՝ հայրենիքն ապրում է հայրենասիրությամբ եւ կործանվում նրա պակասից»:**

Զինկոմը հայտնեց, որ բանակից շնորհակալական նամակներ են ստանում լավագույն ծառայության համար: Դրանցից մեկը ստացվել է Նոյեմբերյանում տեղակայված զորամասից. Ռուբեն Մինասյան անուն-ազգանունով զինվորն է արժանացել այդ պատվին՝ սահմանների պաշտպանությանն ակտիվորեն մասնակցելու համար: **«Հպարտացեք ձեր ավագ ընկերոջով եւ նմանվեք նրան»,**- պատգամեց զինկոմը ծառայության մեկնողներին:

Զինակոչիկներին բանակ ճանապարհելուց հետո հնարավորություն ունեցանք զրուցել զինկոմի հետ: Նախ մեզ հետաքրքրում էր, թե ինչպե՞ս կատարվեց անցումը պաշտպանության նախարարությունից մարզային զինկոմիսարիատ, ինչպե՞ս է զգում նոր դերի մեջ: Պատասխանում է, որ հարմարվելու խնդիր չի ունեցել, քանի որ 26 տարի է, ինչ զինված ուժերում է, տարբեր ստորաբաժանումների հրամանատար է եղել, մշտապես շփվել զինվորների հետ, լավ գիտի նրանց հոգեբանությունը: Նաեւ չի թաքցնում, որ սկզբնական շրջանում դժվար էր, նոր ձեւավորված կառույց է՝ նոր խնդիրներով ու պահանջներով. **«Երբ մի պրոֆիլի աշխատանքից տեղափոխվում ես մյուսին, պիտի արագ հարմարվես, հստակ իմանաս պարտականություններդ, որ կարողանաս ենթականերիցդ էլ պահանջես՝ իրենց պարտականությունները կատարեն»:**

Զինկոմիսարիատը Գորիսում է գտնվում, եւ մարզի բոլոր տարածաշրջաններում լինելու համար ժամանակ եւ միջոցներ են պահանջվում: Իսկ տեղերում լինելը պարզապես անհրաժեշտություն է՝ նախազինակոչային տարիքի կոնտիգենտն ուսումնասիրելու համար: **«Պարտավոր ենք հաղթահարել բոլոր դժվարությունները»,**- այս առումով ասում է զրուցակիցս:

Մի բան է միայն մտահոգում զինկոմին, որ զինակոչիկներն առողջական խնդիրներ չունենան: Յուրաքանչյուր զորակոչից առաջ բժշկական զննումների արդյունքում արտացոլվում է զինակոչիկների հիվանդացության պատկերը: Ասում է, թե եղել են դեպքեր, երբ զինակոչիկ էլ չգիտեր, որ տվյալ հիվանդությունն ունի: Ամեն դեպքում զինակոչիկների շրջանում տարածում ունեն տեսողական եւ կեցվածքի հետ խնդիրները, որոնք, թերեւս, պայմանավորված են այն բանով, որ պատանիները չափից դուրս նստում են համակարգչի առջեւ: Քաշի հետ կապված խնդիրներ կան: Զինկոմը տեղեկացնում է, որ մի շարք հիվանդություններով, որոնց դեպքում նախկինում չէին զորակոչվում, հիմա բանակ են տանում (գիշերամիզություն, թերսնուցում՝ հիմա 45 կգ-ից ցածր քաշ ունեցողները զորակոչվում են 150 սմ հասակ ունենալու դեպքում): Ծառայության հատուկ կարգ է սահմանված այդ հիվանդություններով զորակոչվողների համար: Լինելու է ծառայություն՝ հեշտացված օրակարգով: Վեց ամիսը մեկ տեղի է ունենալու փորձաքննություն, որտեղ ռազմաբժշկական հանձնաժողովը պետք է որոշի, ծառայությանը պիտանի՞ են, թե՞ ոչ:

Զինակոչիկների ֆիզիկական պատրաստվածությանը եւս հեռու է բավարար լինելուց: Շատերը զլանում են զբաղվել ֆիզիկական աշխատանքով, ուստի հեշտությամբ չեն տանի բանակային կյանքի դժվարությունները: Սա զինկոմի դիտարկումն է, բայց ասում է, որ զինակոչիկների մեջ կան այնպիսիք, որ սպորտով զբաղվել են, հետեւել իրենց ֆիզիկական պատրաստվածությանը: Այդպիսիք տարբերվում են մյուսներից:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կոչին՝ վերադառնալ հայրենիք ու կատարել սահմանադրական պարտքը հայկական բանակում, քանի՞ մարդ է հետեւել, եւ նախորդ զորակոչերից խուսափողներ կա՞ն հարցին Ա. Մանուչարյանը կոնկրետ թվեր չնշեց, բայց ասաց, որ բոլոր զորակոչերից խուսափողներ կան, ուղիներ են փնտրում նրանց հայտնաբերելու եւ հետ բերելու համար: Ինչ վերաբերում է զինակոչիկների կրթական մակարդակին, այս առումով զինկոմը դժգոհություն չհայտնեց, քանզի բանակ են զորակոչվում նաեւ բուհավարտ երիտասարդներ, բայց կան այնպիսիք, որ տեւական ժամանակ Ռուսաստանում են բնակվել եւ նույնիսկ հայերենին չեն տիրապետում... Այնպես որ բանակ զորակոչվող պատանիների կրթական մակարդակը տարբեր պատկեր է ներկայացնում:

...Մեր զրույցը զինկոմի հետ ընդհատվում էր հեռախոսազանգերով. Մեղրի էր զանգում, որտեղ զորակոչի երկրորդ հավաքն էր տեղի ունենում. հետաքրքրվում էր դրա ընթացքով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ա՛խ, վոդեւիլ, վոդեւիլ...

էջ 1

ճանաչվել «Սոսի» հեռուստածրագիրը, որին էլ տրվել է 10 տարվա գործունեության լիցենզիա, ընդ որում՝ լիցենզիայի զիջում օրենքը չի նախատեսում:

Իբրեւ լրագրող ներկայացող աղջկանը հիշեցվել է նաեւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի հոդված 46-ի 1-ին կետը, որի համաձայն՝ «Լիցենզիան միակ օրինական հիմքն է, որ թույլ է տալիս Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնել հեռուստածրագրերի հեռարձակում»:

Իբրեւ լրագրող ներկայացող աղջկանը նաեւ խորհուրդ է տրվել ներկայացնել «Զանգեզուր TV»-ի լիցենզիան, որից հետո խմբագիրը կպատասխանի հետաքրքրող բոլոր հարցերին:

Այդ ամենից հետո Սամվել Ալեքսանյանը հեռացել է՝ հայտարարելով. **«Հուլիսի 25-ի ամբողջ օրը կլինեմ Կապանում՝ խմբագրատանը, վերցրեք ձեր լրատվամիջոցի իրավունքը հավաստող լիցենզիան եւ եկեք խմբագրություն, որտեղ կպատասխանեմ Ձեզ հետաքրքրող բոլոր հարցերին»:**

Այնուհետեւ տեղի է ունեցել ամենահետաքրքիրը՝ Լավրենտի ծառա օպերատորը՝ թաքնված ինչ-որ ծառի հետեւում, սկսել է նկարահանել «բացառիկ» տեսարաններ՝ խմբագիրը մոտենում է մեքենային, նստում է մեքենան եւ շարժվում: Ապա նկարահանում է մեքենայի ընթացքը:

Հիրավի, «բացառիկ» տեսարաններ... Բացառիկ՝ հատկապես խմբագրության մեքենայի համար, քանզի այդ մեքենան երբեք այդպես խնամքով չէր նկարահանվել, ինչի համար էլ (նաեւ մեքենայի անունից) շնորհակալություն ենք հայտնում Լավրենտին ու նրա որդիներին:

Վահե ողորմելիի ու Լավրենտ թշվառականի կողմից կազմակերպած այդ զվարճախաղը, անկեղծորեն, խղճմտանք է առաջացնում:

Վահեն, Լավրենտը՝ որդիներով, որ երազում նույնիսկ սարսափում են լրագրողներից, լրագրողի ձայնագրիչից, տեսանկարահանող սարքից, հավանաբար մտածել են, թե խմբագիրն էլ կարող է ճնշվել, բարդույթավորվել, կաշկանդվել, ինչի համար ձեռնարկել են այդ «հարձակումը»:

Մենք, իհարկե, այդ ողորմելիներին նորից կհրավիրենք հրապարակային բանավեճի՝ տեսանկարահանող սարքերով, ինչպես քանիցս հրավիրել ենք Վահեին, մի անգամ էլ՝ դեպուտատ Ավետին, ովքեր էլ փախել ու չեն ներկայացել:

Մինչ այդ, սակայն, կա երկու հարց, որոնց վերաբերյալ առնվազն պատկան մարմիններից պարզաբանում ենք ակնկալում:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Սամվել Գրիգորյանը, նույն դատարանի դատավոր Իգնատ Բեգլարյանը պետք է պատասխանեն, թե ինչ իրավունքով է դատական վերահսկիչը դատական նիստերի դահլիճում հեռախոսով նկարահանել հայցվորի խոսակցությունն ինչ-որ օպերատորի հետ:

Քանի դեռ այդ հարցի պատասխանը չունենք, տեղի ունեցածը գնահատում ենք իբրեւ հայցվոր կողմի վրա ճնշում գործադրելու, հայցվոր կողմին շանտաժի ենթարկելու քայլ:

Կարծում ենք՝ ՀՀ բարձրագույն դատական խորհրդին դիմելու կարիք չի լինի, եւ մենք ողջամիտ ժամկետում կստանանք այդ հարցի պատասխանը:

Հաջորդ հարցը, որ նույնպես պատասխան է պահանջում, վերաբերում է Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի նախագահ Գագիկ Բունիաթյանին:

Ի դեպ, ս.թ. հունիսի 14-ին հղած նամակի պատասխանը դեռ չենք ստացել: Ուստի եւ նորից ենք հարցնում՝ ի՞նչ հիմքով է հեռուստահաղորդման 10 տարվա լիցենզիա ունեցող «Սոսիի» փոխարեն Սյունիքում հեռարձակվում ինչ-որ Վահեի ու էլիզաբեթի ընտանեկան «Զանգեզուր TV» հեռուստածրագիրը:

Վերը շարադրվածը, սակայն, բացատրություն ունի. ե՛ւ Վահեն, ե՛ւ լավրենտականները խուճապի մեջ են, նրանք դուրս են մղվել եւ մղվում Սյունիքի հասարակական-քաղաքական կյանքից, իշխանական ատյաններում այլեւս նրանց առաջ բաց դռներ չկան, այլեւս չեն կարող հպարտանալ, թե կիրակի օրը Լեւոն Ազատիչն էր իրենց տանը, թե Քաջարանի պրոֆիլակտորիայում անձամբ են մարզպետի համար փլով պատրաստել...

«Սյունյաց երկիր»

Հրաժեշտ գունագեղ մանկության առաջին փուլին

Սուլում-սուլում է գնացքը: Գնում-գնում է գնացքը... Դա Գորիսի Վազգեն Սարգսյանի անվան թիվ 1 նախակրթարանի երեխաների երազանքների գնացքն է, որով նրանք գնում են իրենց կյանքի հաջորդ կանգառը: Իսկ կանգառն այդ դպրոցն է, ուր նրանք պիտի ստանան իրենց հազար ու մի ինչու-ների պատասխանը: Նոր աշխարհ ոտք դնելուն դեռ ժամանակ կա, իսկ հիմա դեռ գործեր ունեն. պիտի ներկաներին ներկայացնեն Հայաստանի պատմությունը: Եվ դարերի խորքից գալիս է Հայաստանը՝ տարբեր ժամանակների ընդգրկումով, սկսած Ավարայրից մինչեւ մեր օրերը: Ու հետո թե՝ մենք ենք Հայաստանը: Ու մենք-ի մեջ մտնում է հայոց զինվորը: Նրանք երդվում են լավ ծառայել, լինել հայրենիքի աննկուն պաշտպանը: Իսկ այս ոստիկանը... Նա սահման չի պահում, նա կանոնակարգում է երթեւեկությունը, ապահովում մարդկանց անվտանգությունը: Այսինքն՝ դարերից եկող հինավուրց Հայաստանին փոխարինում է նոր Հայաստանը՝ իր նիստ ու կացով, իր առօրյա կյանքով: Ու երեխաներն այդ ամենն այնպես են ներկայացնում, որ ծնողներին ու հյուրերին թվում է, թե դերերում իսկական դերասաններ են: Եվ ինչքան բան են նրանք սովորել նախակրթարանում. վարվեցողության կանոններից սկսած մինչև... Նախակրթարանում են երեխաները զգացել ընկերության արժեքը, կոլեկտիվ արարման հաճույքը, միասին հաղթանակի հասնելու հրճվանքը, միասին դժվարությունները հաղթահարելու ուրախությունը: Այսինքն՝ նախակրթարանում նրանց մեջ դաստիարակվել է միասնության գաղափարը, որն ամեն հաջողության հենքն է : Եվ միասնության դասեր անցած այս սերունդը Հայաստանի համար գեղեցիկ ապագա ստեղծողների առաջին շարքերում կլինի: Նրանց նախակրթարանում նաեւ հայրենասիրության դասեր են տվել: Եվ այդ դասերը նրանց ամբողջ կյանքի համար է: Ու այստեղ ստացած բազում դասերի համար երեխաները շնորհակալություն են հայտնում տնօրեն Սահիդա Ադունցին, դաստիարակչուհի Հերմինե Մալինցյանին, մանկավարժ Արփինե Ավագյանին, երաժիշտ Նելլի Տոռոզյանին, Անի Ասրյանին: Եվ ծնողները համոզված են, որ երեխաների կյանքի գնացքը ռելսերից երբեք դուրս չի գա, ուրախ սուլելով միշտ առաջ կգնա: Ահա ինչու նրանք շնորհակալական իրենց խոսքն են ուղղում նախակրթարանի բոլոր աշխատակիցներին, ովքեր նույնիսկ անհնարինն են հնարավոր դարձրել, որ երեխաների մանկությունը գունագեղ լինի, որ միշտ լույսը լինի մանուկների ուղեկիցը, եւ նրանք միշտ լույսի հետեւից գնան: Ու երեխաները աստղեր են փռում շուրջ բոլորը, որ լույսը բոլորի համար լինի:

Տնօրեն Սահիդա Ադունցի համար սա 28-րդ տարեվերջյան հանդեսն է: 28 անգամ շրջանավարտ է ուղարկել դպրոց այն համոզմունքով, որ նրանք դպրոցում լավ կսովորեն, կյանքում լավ մարդ կդառնան: Այդպես էլ կա: Եվ դա մեծ երջանկություն է : Բայց դե տնօրենն էլ առաջին հերթին մարդ էակ է: Հուզվում է, այս երեխաների հետ քանի-քանի տարի աշխատել է, լսել նրանց առաջին թոթովանքները:

Ամեն ինչ սկիզբ ունի եւ վերջ: Զարմանահրաշ փուչիկները երկինք են բարձրանում: Իսկ փուչիկներում երեխաների երազանքներն են: Դեպի վեր, դեպի վեր բարձրանում են փուչիկները՝ տանելով երեխաների երազանքները ու նաեւ մարդկությանն ասելու՝ երեխաների երազանքների համար ճամփա բացեք, ու թող ամեն մանուկ այս աշխարհում իր երազանքի տունը կառուցի:

Եվ նորից սուլում-սուլում է գնացքը: 37 երեխայի երազանքի գնացքը: Ու գնացին երեխաները, գնացին իրենց երազանքի հետեւից...

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Նա իր տաք հացից, իր տաք խոսքից բաժին է հանում բոլորին

Գորիսի քաղաքային պատկերասրահում գորիսեցի Նվարդ Բալասանյանի անհատական ցուցահանդեսն է բացվել. դիմանկարներ, նատյուրմորտներ, բնանկարներ ու նաեւ անիմալիստական ժանրի ստեղծագործություններ, որոնց թագն ու պսակը կենդանիներից ձիերն են: Նվարդ Բալասանյանի «կերպավորած» ձիերն ուրիշ են:

-Ձիերը հավատարմության խորհրդանիշ են, ընտանիքի խորհրդանիշ: Նրանք խորհրդանշում են սեր, ուժ, համախմբվածություն,-ասում է Նվարդ Բալասանյանը,-դրա համար էլ իմ շատ կտավների «հերոսները» ձիերն են:

Նվարդի ձիերը սլանում են ժամանակի ու տարածության մեջ, նրանց սլացքի միջից ծնվում է հավատի լուսաբացը, ժամանակը պահմտոցի չի խաղում ձիերի հետ, ձիերը սանձում են ժամանակը, եւ երկրակեղեւն անգամ ճեղք է տալիս, եւ այդ ճեղքից պոռթկում է սերը, բարությունը եւ տարածվում ամենուր ու ամենեցուն, որովհետեւ Նվարդ Բալասանյանն ուզում է, որ մարդիկ սիրեն իրար, որ սերն ու բարությունը կամրջեն աշխարհն ու մարդկանց, որ աշխարհի ոչ մի անկյունում ռումբեր չպայթեն, այլ խաղաղ լուսաբացները դառնան բոլորի բարի առավոտի ավետաբերը: Եվ այդ խաղաղ լուսաբացի մեջ իրար սիրող ու գգվող ձիերն ու անգամ վերջալույսի շողերի հետ ասես պար բռնած ձիերի երամակը վերջալուսի շողերից է կերտում աշխարհի խաղաղությունը եւ այն ասես կոչ է մարդկանց՝ մարդիկ, կյանքը հավերժ չէ, բարին գործեք եւ վայելեք աշխարհը, բնությունը, թաթախվեք բնության գույներով, միաձուլվեք բնությանը եւ ձեր շուրջը խենթություն տարածեք:

-Իմ տեսակը տարածությունն է,-ասում է Նվարդ Բալասանյանը:

Եվ Նվարդ Բալասանյան նկարչուհին տարածության մեջ ամուր է կանգնել եւ այդ տարածությունից բուռ-բուռ տալիս է մարդկանց որպես սուրբ նշխարք, բաժանում է դարձյալ... Սեր ու բարություն: Եվ դա այն պատճառով, որ մարդկային գոյության ամենաանհրաժեշտ բաղադրիչը՝ խիղճը, միշտ պայքարի ելնի մարդու ես-ի դեմ, որ նյութապաշտ այս դարի թոհուբոհում նա իր տաք հացից ու իր տաք խոսքից բաժին հանի բոլորին. «կարդում» եմ նրա կտավներում:

-Բոլորի մեջ գենետիկան խոսում է,-ասում է Նվարդ Բալասանյանը,-եւ դիմանկար ստեղծելուց հենվել եմ նրանց գենետիկայի վրա, որպեսզի դիմանկարները սոսկ դիմանկարներ չլինեն, այլ տվյալ դիմանկարը դառնա այդ գերդաստանի պատմությունը:

Իսկ դիմանկարներում գորիսեցիներն են, ծանոթ դեմքեր, ծանոթ պատմություններ ու կենսագրություններ: Եվ ոչ ոք չի վիճարկում Նվարդի «գենետիկական տեսությունը»: Նա ճիշտ շեշտադրում է կատարել: Նրա ստեղծած դիմանկարներն իրենց գենետիկական կոդն ունեն: Եվ այդ կոդն այն բանալին է, որով Նվարդ Բալասանյանը կարողացել է ստեղծել մնայուն դիմանկարներ: Իսկ կոդն այդ գտնել ու կարդալը քչերին է հաջողվում:

Էլ ինչ գորիսեցի նկարիչ, որ ժայռեր չի նկարելու: Ժայռերն ասես մեր թալիսմանն են, մեր լինելիությունը, մեր պատմությունը, մեր կենսագրության խոսուն վավերագրերը: Եվ Նվարդի ժայռերը քարացած չեն, անշարժ չեն: Դրանք խոսում են քեզ հետ, բոլորի հետ, ամեն ազգի հետ՝ իր լեզվով եւ բոլորի հետ յուրովի: Եվ ցուցահանդեսի այցելուներն ասես ժայռերի մեջ փնտրում են մեր ապուպապերի պատմությունը, որ գալիս է անհիշելի ժամանակներից:

Նվարդի համար ներշնչանքի աղբյուր է դարձել նաեւ ջուրը: Ջուրը նկարչուհու համար ազատություն է , օդ: Եվ նրա կտավներում ջուրը դարձել է գիրկընխառն ալիքներ, բայց հեզ ու խաղաղ ալիքներ, որ քնքշորեն փարվում են ամենքին ու զովացնում բոլորին:

Նվարդ Բալասանյանը մանկուց է նկարում: Նկարելու սերը նրան տարել է Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան: Այն ավարտելուց հետո ստացել է նկարիչ-գծագրողի որակավորում: Աշխատանքի է անցել Գորիսի Սերո Խանզադյանի անվան թիվ 6 դպրոցում;

-Ամեն տարի իմ աշակերտներից առնվազն հինգը նկարչության ասպարեզն է ընտրում,-ասում է Նվարդը: -Դա իմ աշխատանքի ամենամեծ գնահատականն է :

Նրա գնահատականն է նաեւ հետեւյալ փաստը. այս տարի Նվարդ Բալասանյանը դարձավ Ռուսաստանի Դաշնության նկարիչների ակադեմիայի անդամ:

-Ես շնորհակալ եմ մեր համաքաղաքացի, մոսկվայաբնակ Մարտիկ Գասպարյանին, ով այդ գործում մեծ դեր խաղաց: Նա իմ ստեղծագործությունները ներկայացրեց ակադեմիայի խորհրդին, խորհուրդն էլ հավանություն տվեց իմ գործերին, ու ես դարձա ակադեմիայի անդամ:

Եվ այս ցուցահանդեսը, որ հանդիսավորությամբ բացվել է Գորիսի քաղաքային պատկերասրահում ու որի ժամանակ այցելուները դրվատանքի ջերմ խոսքեր ասացին նկարչուհու հասցեին, Նվարդի սերն է մեր քաղաքի հանդեպ:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Դաշնակահարուհու կապանյան բեմելը

Կապանի արվեստի քոլեջի ազդագիրը հրավիրում էր կրթօջախի Վահագն Ստամբոլցյանի անվան երգեհոնային դահլիճ, որտեղ դաշնամուրային համերգով հանդես պիտի գար Վերժինե Էլյազյանը: Այդ անուն-ազգանունը հայտնի չէ կապանցի արվեստասերին: Դաշնակահարուհին ծնվել եւ մեծացել է Ռուսաստանի Դաշնության Կուրգան քաղաքում, սովորում է տեղի Դմ.Շոստակովիչի անվան երաժշտական քոլեջի երրորդ կուրսում:

Չնայած դեռատի տարիքին հասցրել է համերգներով հանդես գալ Կուրգանում, Չելյաբինսկում, Տյումենում, Յուժնի Ուրալում, Պերմում, Սոչիում: Երկու անգամ մասնակցել է Երեւանում կազմակերպված Առնո Բաբաջանյանի անվան մրցույթին՝ արժանանալով մրցանակների: Նաեւ համերգային ծրագրով հանդես է եկել Ավստրիայի Զալցբուրգ քաղաքում՝ մեծն Մոցարտի ծննդավայրում՝ այն սրահում, որտեղ ժամանակին նվագել է աշխարհահռչակ կոմպոզիտորը:

Մի փափագ եւս ուներ կրտսեր Վերժինեն՝ հանդես գալ Կապանում, որտեղ գտնվում են իր արմատները: Իսկ Կապանի արվեստի քոլեջի դահլիճում հանդես գալը մի այլ խորհուրդ ուներ. Վերժինեն իր տատի անունն էր կրում, Կապանի երաժշտական ուսումնարանի (այժմ՝ արվեստի քոլեջ) երկարամյա դասախոս, դաշնակահարուհի Վերժինե Ալեքսանյանի, ով վաղաժամ հրաժեշտ է տվել երկրային կյանքին...

Շնորհալի դաշնակահարուհին վարպետությամբ հնչեցրեց Բախի, Բեթհովենի, Լիստի, Ռախմանինովի, Շումանի ստեղծագործություններից եւ որպես հավարտ համերգի, կատարեց հայկական մոտիվներով սեփական ստեղծագործությունը: Հանդիսականը շնորհալի դաշնակահարուհուն վարձատրեց երկարատեւ ծափողջույններով, եւ որպես «բիս» Վերժինեն կատարեց Արամ Խաչատրյանի վալսը՝ «Դիմակահանդես» դրամայի համար գրված երաժշտությունից:

Համերգի ավարտին դաշնակահարուհու հայրը՝ Գարիկ Էլյազյանը շնորհակալություն հայտնեց Կապանի քոլեջի տնօրենությանը՝ աջակցության եւ դահլիճը տրամադրելու համար, իսկ քոլեջի տնօրեն Վարդան Քոչարյանը դաշնակահարուհուն մաղթեց նոր հաջողություններ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Որ առողջ մեծանա մանուկը

«Պերինտալ եւ նորածնային խնամքի բարելավում Սյունիքի եւ Գեղարքունիքի մարզերում» ծրագրի շրջանակում հուլիսի 4-ին հանդիպում տեղի ունեցավ Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում: Միջոցառումը պատեհ առիթ էր մայրանալու պատրաստ ծնողներին իրենց հարցերն ուղղելու մասնագետներին ու լսելու նրանց խորհուրդները, հարստացնելու գիտելիքները մանուկների առողջ սնուցման եւ պատշաճ խնամքի վերաբերյալ: Ինչպես հանդիպումից առաջ «Սյունյաց երկրին» փոխանցեց մանկաբույժ, Սյունիքի մարզի վաղ մանկական զարգացման ծրագրերի համակարգող Անիկ Գրիգորյանը, երբ ծրագիրը Սյունիքում մեկնարկեց World Vision կազմակերպության կողմից, մարզում վաղ տարիքի երեխաների շրջանում թերսնուցումը կազմում է մոտ 15%, ինչը մեծ ռիսկ է պարունակում վաղ տարիքի երեխաների հիվանդացության առումով: Մարզում նաեւ նկատվում է սակավարյունություն եւ՛ երեխաներ, եւ՛ հղի մայրերի շրջանում: Ծրագիրը միտում ունի նվազեցնել թերսնուցման եւ սակավարյունության ցուցանիշները: Հանդիպմանը հրավիրված էր նաեւ յոգայի մասնագետ: Երիտասարդ մայրիկները տան պայմաններում մի քանի դյուրին վարժությունների դասեր առան: Հանդիպմանը քննարկվեցին հղիների եւ երիտասարդ մայրերի կրծքով սնուցման եւ սննդակարգին առնչվող հարցեր: «Պերինտալ եւ նորածնային խնամքի բարելավում Սյունիքի եւ Գեղարքունիքի մարզերում» ծրագիրը իրականացվում է Սյունիքի եւ Գեղարքունիքի 97 համայնքում եւ կիրականացվի մինչեւ 2018թ.-ի սեպտեմբերը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Կապանցի եռացատկորդի աննախադեպ նվաճումը

Ֆինլանդիայի Տամպերե քաղաքում ավարտվել է մինչեւ 20 տարեկանների աթլետիկայի աշխարհի առաջնությունը, որին մասնակցել են Հայաստանը ներկայացնող երկու աթլետներ՝ արագավազորդուհի Գայանե Չիլոյանը (Երեւան) եւ եռացատկորդ Արամայիս Սարգսյանը (Կապան):

Առավել հաջող է հանդես եկել մեր հայրենակիցը: Արամայիս Սարգսյանը որակավորման փուլում արձանագրեց անձնական նոր ռեկորդ՝ 15մ 94սմ՝ փոքրիկ սխրանք գործելով եւ գերազանցելով սպասելիքները: Ի վերջո 23 մասնակիցների շարքում գրավեց 4-րդ տեղը, որն էլ նրան եզրափակիչ փուլին մասնակցելու ուղեգիր է պարգեւել:

Հաջորդ օրը եռացատկի մրցման եզրափակիչ փուլի 12 մասնակիցների պայքարում 3-ական փորձերից հետո ի հայտ են եկել այն 8 ուժեղագույնները, որոնք եւս 3 փորձ կատարելու եւ մեդալները վիճարկելու իրավունք են ստացել: 3-րդ փորձի ժամանակ Արամայիս Սարգսյանը գրանցել է 15մ 89սմ արդյունքը եւ վճռորոշ փուլում 8 ուժեղագույնների շարքում պայքարը մրցանակային տեղերի համար շարունակելու իրավունք վաստակել: Վերջնական արդյունքում 15մ 89սմ արդյունքով Արամայիս Սարգսյանը գրավել է 4-րդ հորիզոնականը:

Դա արդեն կապանցի երիտասարդ շնորհաշատ եւ խոստումնալից եռացատկորդի համար նշանակալի հաջողություն է, քանի որ վերջին անգամ ՀՀ պատվիրակներից 2014թ. ԱՄՆ-ում անցկացված մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնության եզրափակչում հանդես գալու իրավունք էր ստացել Արսեն Պետրոսյանի լավագույն սանը՝ այսօր ՀՀ աթլետների ընդգծված առաջատար, կապանցի 23-ամյա եռացատկորդ Լեւոն Աղասյանը, ով եզրափակչում գրանցած հրաշալի արդյունքով 16մ 28սմ արդյունքով 25 մասնակիցների մեջ զբաղեցրել էր հինգերորդ տեղը:

Իրավամբ մրցաշրջան 2018թ. շատ հաջող է ընթանում Արսեն Պետրոսյանի խոստումնալից սան, 19-ամյա Արամայիս Սարգսյանի համար: Նախ մայիսին Արտաշատում աթլետիկայի 2018թ. ՀՀ առաջնությունում ետ մնաց իր անվանի համաքաղաքացի, ՀՀ աթլետների ներկայիս առաջատար Լեւոն Աղասյանից ու 15մ 60սմ արդյունքով ոչ միայն ՀՀ փոխչեմպիոն դարձավ, այլ նաեւ լրացրեց մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնության մասնակցելու նորմատիվն, ու այդ ստուգատեսում Հայաստանի Հանրապետությունը ներկայացնելու պատվին արժանացավ: Որ այդ գրանցած փայլուն արդյունքը պատահական չէր, Արամայիսն ապացուցեց նաեւ օրերս մինչեւ 20 տարեկանների Բալկանյան առաջնությունում եռացատկի հատվածում 15մ 67սմ ցուցանիշով նվաճած բրոնզե մեդալով: Նա այս տարի հաղթող է ճանաչվել նաեւ Գառնիկ Ղուկասյանի եւ Մալոյան եղբայրների հուշամրցաշարերում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մեդալների հարուստ ավարով

Կապանի մարմնամարզության մարզադպրոցի սանուհիները հաջողությամբ են հանդես եկել հուլիսի 8-10-ը Գյումրիում անցկացված «Բարեկամություն» միջազգային մրցաշարում, որին մասնակցում էր մոտ երկու հարյուր մարզուհի՝ Ռուսաստանի Դաշնությունից, Ուկրաինայից, Ուզբեկստանից, Բելառուսից, Քաթարից: Մարի Բաղդասարյանը պարանով վարժությունում գրավել է առաջին տեղը, կապանցի նազելիներից չորսը բարձրացել է պատվո պատվանդանի երկրորդ հարթակ, իսկ վեցն արժանացել է երրորդ մրցանակի: 11-րդ անգամ է անցկացվում Գյումրու միջազգային, սա կապանցի մարզուհիների 10-րդ մասնակցությունն էր:

«Գյումրու միջազգային մրցումները միակն է, որին կարողանում ենք մասնակցել: Ավելի ստույգ՝ մրցումներ շատ կան, բայց ֆինանսների բացակայության պատճառով չենք կարողանում մասնակցել, դա մեր ամենախոցելի տեղն է: Մայիսին հրաշալի մրցաշար կար Ալուշտայում: Ամեն ինչ հաշվարկված էր, մեզ խոստացել էին հովանավորել, մրցման պիտի մեկնեին չորս մարզուհի, երկու մարզիչ: Բայց, ավա՜ղ, հովանավորություն չեղավ վերջին պահին: Ինչեւէ, հուսով ենք, որ առաջիկայում օգնության ձեռք կմեկնեն, որովհետեւ հեռանկարային մարզուհիներ ունենք, ովքեր մրցափորձի պակաս ունեն, ինչը կարելի է լրացնել միայն նման բարձրակարգ մրցումների միջոցով»,- «Սյունյաց երկրին» փոխանցեց մարզադպրոցի ավագ մարզիչ Օլգա Դունաեւսկայան, ով կրթօջախի հիմնադիրներից է եւ այդտեղ աշխատում է 1978 թվականից: Նրա փոխանցմամբ՝ մարզուհիների մարզավիճակի վրա բացասաբար է անդրադառնում այն, որ ծմռան ամիսներին դահլիճը չի ջեռուցվում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀՀ պաշտպանության նախարարը հարավարևմտյան սահմանագոտում քննարկել է առաջնագծի վերազինման շարունակականությունը

ԵՐԵՎԱՆ, 22 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը հուլիսի 21-ին այցելել է հանրապետության հարավարևմտյան սահմանագոտի, շրջել մարտական հենակետերով, զրուցել դիրքապահ անձնակազմի հետ: Այնուհետեւ նախարար Տոնոյանը զորամասի ղեկավար կազմի հետ քննարկել է առաջնագիծը վերազինելու գործընթացի շարունակականությանը վերաբերող հարցեր եւ տվել հանձնարարականներ:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, պաշտպանական գերատեսչության ղեկավարը մարտական հերթապահության ընթացքում աչքի ընկած մի խումբ զինծառայողների խրախուսական նվերներ է հանձնել:

Հարավային զորամասերից մեկում տեղի ունեցած խորհրդակցության ընթացքում անդրադարձ է կատարվել սահմանին տիրող իրավիճակի, առաջնագիծն ինժեներական նոր լուծումներով հագեցնելու եւ անհրաժեշտ սարքերով համալրելու հետ կապված մի շարք հարցերի:

Այցի ընթացքում Դավիթ Տոնոյանը եղել է նաեւ Մեղրի համայնքում, որտեղ ավարտին է մոտենում սպայական շենքերի շինարարությունը: Նախարարը շրջել է նորակառույց շինություններում, ծանոթացել պայմաններին, համապատասխան ծառայությունների ղեկավարների հետ քննարկել սպաների բնակավորման հարցերը: Մեղրիում կառուցվող սպայական շենքերը շահագործման կհանձնվեն օգոստոս ամսին:

Մեղրիում եւս խնդրահարույց է հանքերի շահագործումը

էջ 5

ձեզ ուղղված նամակի հանձնումը, քանզի սպասում էինք տեղական ինքնակառավարման մարմինների եւ ավագանու հստակ դիրքորոշմանը: Չնայած ավագանու անդամներից երկուսն ակտիվ ներգրավված էին այդ պայքարում նախաձեռնող խմբի կազմում, սակայն ավագանին այդպես էլ հարցը չմտցրեց օրակարգ եւ չքննարկեց:

Կոնկրետացնեմ՝ Լիճքի հանքավայրի շահագործումը ժամանակավորապես դադարեցվել է, բայց մեղրեցիները վստահ չեն, որ այդպես էլ կլինի, բացի այդ պահանջում են, որ այս տարածաշրջանում նոր հանքերի բացման աշխատանքներ չկատարվեն, որովհետեւ մենք այլեւս տեղ չունենք:

Հանքարդյունաբերության ագրեսիվորեն զարգացումը վնասում է գյուղատնտեսությանը, ինչով զբաղված է Մեղրու տարածաշրջանի բնակչության 70%-ը:

Նիկոլ Փաշինյան

-Ես Ազգային ժողովում եւ ընդհանրապես նախկինում իմ ելույթներում քննադատաբար նշել եմ, որ մեր ընդերքը քանդում ենք եւ համարում ենք, որ տնտեսություն ունենք: Իրականում մեր երկրի տնտեսական աճը պայմանավորված է պղնձի եւ մոլիբդենի խտանյութի գներով: Մետաղական բորսայում դրանք բարձրանում են, տնտեսական աճ ենք արձանագրում, իջնում են՝ տխուր պատկեր ենք ունենում: Ընդհանուր առմամբ կարծում եմ՝ դա պրոբլեմ է, բայց նաեւ չեմ կարծում, որ պիտի հանքարդյունաբերությունը փակենք: Համաձայն եմ, որ ամեն դեպքի առումով պիտի լինի կոնկրետ վերաբերմունք: Գիտեք՝ հանձնարարական եմ տվել, որ բոլոր մետաղական հանքերում ստուգումներ իրականացվեն, ստուգվի դրանց գործունեության իրավաչափությունը, օրինականությունը, համապատասխանությունը բնապահպանական նորմերին: Դուք գիտեք, որ Ամուլսարի շահագործումը հասարակական ինչ արձագանք է ունեցել, ես մեկնելու եմ այնտեղ: Ընդամենը մի բան եմ խնդրում ձեզնից եւ բոլորից՝ հնարավորություն տալ, որ հավաքվեն փաստեր, որոնց հիման վրա հնարավոր լինի կայացնել որեւէ որոշում: Անկեղծ ասեմ՝ բոլոր խնդիրներին ծանոթ եմ, ինչպես եւ շատ-շատերը՝ լրատվամիջոցների վերնագրերից, քաղաքացիների հարցազրույցներից եւ այլն: Որոշում կայացնելու համար պիտի հավաքել փաստեր, որոնք լինեն ստուգված, լինեն անառարկելի, եւ այդ փաստերի հիման վրա կայացնել որոշումներ: Իմ միակ խնդրանքը դա է, որ փաստեր լինեն, դրանք լինեն թափանցիկ, եւ որոշումներն էլ նույնպես լինեն թափանցիկ: Եվ որոշումները կայացվեն այնպես, որ Հայաստանի Հանրապետությունը դրանից չտուժի: Եթե, օրինակ, որեւէ հանքի փակման վերաբերյալ որոշում պիտի կայացվի, դա պիտի լինի հիմնավորված: Որովհետեւ այդ նույն ներդրողները կարող են միջազգային ատյանում Հայաստանին դատի տալ, եւ պարզվի, որ մեր արտաքին պարտքի վրա, որ յոթ միլիարդ է կազմում, մի միլիարդ էլ պիտի ավելանա: Հետեւաբար, որ ճանապարհ է փակվում, այս է արվում, այն է արվում, դա կոնկրետ իմ դեմ է, իմ կառավարության դեմ է, քանի որ քաղաքացիական անհնազանդություն ձեռնարկում են այն ժամանակ, երբ տվյալ կառավարությանը չեն վստահում:

Ես կարող եմ մի բան հստակ վստահեցնել: Ես որեւէ հանքի հետ կապված որեւէ կոռուպցիոն պարտավորվածություն չունեմ: Իմ միակ պարտավորությունը ձեր հանդեպ է: Եվ ուրիշ տարբերակ չկա: Դրա համար ժամանակ է անհրաժեշտ, մանավանդ Լիճքի դեպքում, լավ է, ինձ տեղեկացրին, որ հանքի հետագա շահագործումը կասեցված է: Բայց ես էլի եմ ասում, եթե հավաքեք փաստեր եւ ապացուցեք ձեր ասածի ճշտությունը, միանշանակ կկայացվի որոշում, բաց եթե հավաքվեն փաստեր, որոնք մեզ բոլորիս կհամոզեն, որ այդ հանքը կարող է շահագործվի առանց ձեզ հուզող մտահոգությունների, եւ պրոբլեմներ չեն առաջանա, մենք այդ հնարավորությունը պետք է օգտագործենք: Սա է իմ մոտեցումը: Եվ եթե ընդունելի է այդ մոտեցումը, երաշխավորում եմ, որ մենք հենց այդպես էլ կվարվենք:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR-ԿՈԴ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 27.07.2018թ.: